2009, ԱՊՐԻԼ Ա, ԹԻՎ 7 (291)

# Քրիստոնյա Հայաստան

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

## Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ԱՎԵՏՄԱՆ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ

*Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից հայրապետական Մեր օրհնությունն ենք բերում աշխարհասփյուռ մեր ժողովրդին Ավետման տոնի առիթով եւ շնորհավորում կանանց ու մայրերին՝ Մայրության եւ գեղեցկության օրվա կապակցությամբ:*

*Փրկչի ծննդյան ավետումը Սուրբ Աստվածածնին՝ աշխարհի փրկության աստվածային խոստումի բարի լուրն էր, վկայությունը Բարձրյալի անսահման սիրո ու խնամքի՝ մարդկության հանդեպ:*

*Սուրբ Աստվածածինն օրինակ է առաքինության, բարեպաշտության, առ մարդիկ սիրո ու նվիրումի: Թող Աստվածամոր լուսավոր կերպարն այսօր եւ միշտ ոգեշնչի եւ առաջնորդի կանանց՝ ապրելու առ Աստված հավատքով, ծառայելու մեր երկրի առաջընթացին, ընտանիքների բարօրությանն ու ամրությանը, մայրական հոգածությամբ դաստիարակելու արժանավոր զավակներ հավատավոր մեր ժողովրդի, Հայրենիքի եւ Սուրբ Եկեղեցու:*

*Աղոթում ենք, որ Փրկիչ մեր Տերը շնորհազարդի տիկնանց եւ օրիորդաց՝ ամենախնամ Իր սուրբ Աջի հովանու ներքո պարգեւելով երջանկություն եւ բյուր բարիքներ, եւ սուրբ Աստվածածնի բարեխոսությամբ Տիրոջ օրհնությունն առատ արգասիքներ բերի մեր կյանքում, համայն աշխարհում:*

## Սուրբ Հարության տոնը Մայր Աթոռ Սբ Էջմիածնում

Ապրիլի 12-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում մեծ հանդիսավորությամբ տոնախմբվեց մեր Տեր եւ Փրկիչ Հիսուս Քրիստոսի հրաշափառ Հարությունը:

Առավոտյան Սբ Հռիփսիմեի վանքի մոտ հավաքված Մայր Աթոռի եւ ՀԲԸՄ-ի հովանու ներքո գործող հայորդյաց տների հարյուրավոր սաներ ավանդական քայլերթով շարժվեցին դեպի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին: Թմբուկների ձայների եւ փողային նվագախմբի կատարումների ներքո, ավետելով քաղաքի բնակիչներին Տիրոջ Սուրբ Հարության ավետիսը, նրանք հասան Միածնէջ տաճար՝ դիմավորելու հայրապետական շքեղ թափորը:

Տաճարի զանգերի ղողանջների ներքո Վեհարանից շարժվեց խաչերով ու խաչվառներով պսակված թափորը՝ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսին եւ ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանին ամպհովանիով առաջնորդելով դեպի տաճար: Հայրապետական ամպհովանակիրներն էին «Ծտառ-Տասսի» թղթակից Տիգրան Լիլոյանը, ՀՀ Գրականության եւ արվեստի ինստիտուտի տնօրեն Ավետիք Իսահակյանը, երգահան Արա Գեւորգյանը եւ բռնցքամարտիկ Վախթանգ Դարչինյանը:

Պատարագի սրբազան արարողության ընթացքում Նորին Սրբության առընթերականներն էին Գեւորգյան հոգեւոր ճեմարանի տեսուչ Տ. Սահակ եպս Մաշալյանը եւ Հայոց բանակի հոգեւոր առաջնորդ Տ. Վրթանես եպս Աբրահամյանը:

Փրկչի Հարության տոնի առիթով Նորին Սրբությունը հայրապետական իր պատգամը հղեց համայն հայ ժողովրդին:

Սուրբ պատարագի արարողությանը ներկա էին ՀՀ ԱԺ նախագահ Հովիկ Աբրահամյանը, ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանը, ԱԺ պատգամավորներ, ՀՀ կառավարության անդամներ, Գերագույն հոգեւոր խորհրդի անդամներ, Հայաստանում հավատարմագրված դիվանագիտական առաքելությունների ղեկավարներ, միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ, գիտության, կրթության եւ մշակույթի գործիչներ:

Հավարտ սուրբ պատարագի՝ Վեհարանի հանդիսությունների սրահում տեղի ունեցավ պաշտոնական ընդունելություն, որի ընթացքում Ամենայն Հայոց Հայրապետն ամենքին վերստին փոխանցեց Տիրոջ հրաշափառ Հարության հոգենորոգ ավետիսը:

## Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՊԱՏԳԱՄԸ ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ

### (Սուրբ Էջմիածին, 2009 թ. ապրիլի 12)

*«Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:*

*«Այժմ աւադիկ հաշտեցոյց անդամովք մարմնոյ Իւրոյ ի ձեռն մահուան Իւրոյ՝ յանդիման կացուցանել զձեզ սուրբս եւ ամբիծս եւ անարատս առաջի Նորա, եթէ կայցէք ի հաւատսն արմատացեալք եւ հաստատեալք, եւ անշարժք ի յուսոյ Աւետարանին, զոր լուարուք, քարոզելոյ ընդ ամենայն արարածս ի ներքոյ երկնից»* **(Կող. Ա 22 - 23)**

*Սիրելի՛ բարեպաշտ ժողովուրդ,*

*Մեր եկեղեցիների խորաններից այսօր տրվում է մեզ մեր Տիրոջ եւ Փրկչի հրաշափառ Սուրբ Հարության ավետիսը: Հավատավոր մեր հոգիներին վերստին հնչում է մարդկության փրկության շնորհի անզուգական լուրը, թե մեր Տերը՝ Քրիստոսը, հաշտեցրեց մեզ Աստծո հետ Իր մարմնով եւ Իր մահվամբ, որպեսզի ներկայացնի մեզ Նրա առաջ սուրբ, անբիծ եւ անարատ, եթե ամուր ու անսասան մնանք հավատի մեջ եւ անխախտ հույսի մեջ Ավետարանի, որ լսեցինք, եւ որ քարոզվեց երկնքի տակ բոլոր արարածներին:*

*Արդարեւ, ո՞վ կարող էր մարդկանց կանգնեցնել Աստծո առաջ սուրբ եւ անարատ, եթե ոչ միայն՝ Աստծո Որդին, Ով քավեց մարդկության մեղքը՝ Իր արդար ու պատվական արյունով եւ Իր հարությամբ փրկեց մարդկանց մահից ու շնորհեց ուղին հավիտենական կյանքի: Այսօր վերստին խնդությամբ օրհնաբանում ենք Քրիստոսին, նորոգվում ենք հավատքով եւ հույսով, որ քարոզությունն է Ավետարանի, քանզի հարուցյալ է Փրկիչն աշխարհի, եւ մենք հուսացյալ ենք Նրա պարգեւած փրկության շնորհին:*

*Աստծուն հավատալը Նրա գոյության մասին սոսկ իմացությունը չէ, այլ Աստծուն սիրելը, Աստծո Խոսքն ընդունելը, ինչպես ուսուցանել են մեզ մեր հայրերը, եւ կենսաբար այդ Խոսքով առաջնորդվելը: Հավատքը թանկագին ավանդ է, հոգու կենդանությունն ու լույսն է, որը պիտի պահպանել, խնամել, սնուցել ու աճեցնել, որ այն որեւէ մտածությամբ, խոսքով կամ գործով չվնասվի ու չավերվի մեր հոգում:*



*Հավատքը Քրիստոսով, Ով «ճշմարիտ պատկերն է աներեւույթ Աստծո», մարդկանց հանդեպ աստվածային սիրո ու ողորմության ճանաչումն ու փառավորումն է եւ այդ սիրով ապրելը: Իր առաքելության ընթացքում մեր Տերը՝ Հիսուս Քրիստոսը, հաճախ էր խոսում հավատքի կարեւորության մասին: Նա ուսուցանեց եւ հրաշագործեց առավելապար այնտեղ, ուր հավատք գտավ եւ տրտմեց ու վշտացավ, երբ չգտնվեց հուսացյալ հոգի, հավատք Աստծո հանդեպ, այլ միայն՝ արտաքին ձեւ աստվածպաշտության: Տերը միշտ մեզ հետ է, եթե մենք աներկմիտ հոգով Նրա հետ ենք: Իսկ ուր Տերն է՝ ազատություն է, ճշմարտություն է, արդարություն է, սեր ու խաղաղություն է: Ուր Տերն է՝ փրկության շնորհ է, բժշկություն, մխիթարություն, հարուցյալ հոգի է, հույս է եւ հավատք:*

*Հավատքի հրաշքն է պատմում մեզ Սուրբ Գիրքը. կույրերը տեսնում են, կաղերը՝ քայլում, բորոտները՝ մաքրվում, մահացածները հարություն են առնում: Այս ամենը տեսնելով եւ Տիրոջ կենարար խոսքը լսելով՝ մարդիկ հետեւում էին Նրան՝ հավատալով, որ իրականացել են Փրկչի մասին մարգարեությունները: Հավատքը սասանվեց, եւ հուսալքությունը համակեց մարդկանց Քրիստոսի խաչելությունից հետո: Երկյուղը համակեց անգամ Տիրոջ աշակերտներին, ովքեր շփոթված ու տարակուսած էին, երբ հարուցյալ Քրիստոսը հայտնվեց նրանց մեջ եւ խոսեց նրանց հետ: Նույն Տերն էր առաքյալների աչքերի առջեւ՝ Նա, Ով խաչվեց եւ գերեզման դրվեց, եւ Ում տեսնում էին, ահա, հարուցյալ: Այժմ լուսավորված մտքով՝ առաքյալները հասկացան, որ մարդկության համար բացվել է փրկության՝ մահվանից կյանք առաջնորդվելու ճանապարհը: Ու մինչ այդ, եթե վախեցած եւ հուսաբեկ էին, այլեւս մահից աներկյուղ տարածեցին Ավետարանը, որ հարուցյալ է Քրիստոսը՝ Փրկիչն աշխարհի:*



*Շարունակությունը՝ էջ 2*

# Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ...

*Սկիզբը՝ էջ 1*

*Սիրելի՛ բարեպաշտ ժողովուրդ, այսօր եւ միշտ հարուցյալ Քրիստոսը մարդկանց հետ է՝ նորոգելու համար կյանքը, վերափոխելու աշխարհը: Հարուցյալ Քրիստոսը մարդկանց հետ է՝ հաստատելու աստվածսիրության եւ մարդասիրության ընթացքներում, որպեսզի մերժվեն սուտը, անարդարը, նախանձն ու ատելությունը, վերանան արհավիրքն ու պատերազմը, ցավը, հոգսը, կարիքը, եւ Աստծո շնորհն ու ողորմությունը մարդկային կյանքում առատանան այնպես, ինչպես երկիրն է ստանում երկնքից լույս, ցող, անձրեւ եւ կանաչում է, ծաղկում ու պտղաբերում: Սակայն ի՞նչ կարելի է սպասել, ի՞նչ հնարնկար հուսալ, եթե արարչաստեղծ կյանքը հաստատվի աստվածային ճշմարիտ սիրուց, աստվածային լույսից հեռացող, Աստծուն ուրացող հոգու մեջ, ի՞նչ հնարնկար, եթե ոչ այն, որ «չար ու խաբեբա մարդիկ չարից այն կողմ էլ պիտի գնան» (Բ Տիմ. Գ 13): Գալիքի հույսը Աստված է՝ մեր Տերը՝ Հիսուս Քրիստոսը, Ով պարգեւում է մարդկանց զորությունը հարուցյալ կյանքով ապրելու, միշտ դեպի բարին ընթանալու, դեպի խաղաղ, բարօր, ապահով ու արդար աշխարհ:*

*Քրիստոսով իր փրկությանը, կյանքի նորոգությանը հավատաց եւ մեր ժողովուրդը՝ հաստատվելով անշարժ վեմին Ավետարանի քարոզած հույսի եւ հավատքի: Առաքյալների, առաքելապատիվ Սուրբ Գրիգոր Լուսավորիչ Հայրապետի ու բազում սրբերի հավատքով հարուցյալ Քրիստոսը քայլեց մեր երկրում, լուսավորեց մեր ժողովրդի կյանքը, օրհնեց մտքի եւ հոգու արգասիքներով, զորացրեց եւ հույսով պահպանեց փորձությունների ու նեղությունների մեջ: Փրկչին ապավինած՝ մեր ժողովուրդը վեր հառնեց մահվան խորխորատներից եւ հարուցյալ իր նոր կյանքը վերընձյուղեց, իր տունը կառուցեց, հայրենի ծուխը ծխեցրեց ու թեեւ տարագիր ու աշխարհասփյուռ՝ մնաց համախումբ ու միասնական, հավատաց արդարության հաղթանակին, ազատության իրավունքին, բարիով ու բարիքով կյանքի վերափոխմանը, խաղաղ աշխարհի տեսիլքին:*

*Այս հավատով ու ձգտումներով, սիրելի՛ հավատավոր զավակներ, այսօր ջանում ենք բարգավաճ դարձնել Հայաստան եւ Արցախ մեր հայրենի ազատ երկիրը, զորացնել եկեղեցական եւ ազգային մեր կյանքը ի սփյուռս աշխարհի: Մեր հույսերի ու նպատակների իրագործման եւ մեր օրերի դժվարությունների հաղթահարման համար ուղեկից դարձնենք մեզ միմյանց հանդեպ տերունապատվեր սերը, հարգանքը, ազնվությունն ու վստահությունը, հոգածությունն ու աջակցությունը, որ հիմքն ու ամրությունն են եկեղեցական ու ազգային մեր կյանքի, ընտանիքների, ընկերության, բարեկամության ու արդյունավոր գործակցության: Այդ արժեքներով են խնամվում եւ բարգավաճում պետական ու հասարակական կյանքի կառույցները եւ ծառայում ընդհանուրի բարիքին: Այդ արժեքները պիտի օգնեն մեզ հատկապես այսօր, տնտեսական անհաստատ իրավիճակներում, առկա խնդիրների ու մտահոգությունների պայմաններում գտնելու հաստատուն եւ բարեհույս ուղիները, Հայրենիքում եւ Սփյուռքում կյանքի կոչելու բարեբեր գործեր: Այո՛, աներկյուղ, «քարձրագլուխ պարծենում են» ու պիտի պարծենան ճշմարիտ հավատքն ու հավատի գործերը: Հավատավոր հոգու ազնիվ արգասիքներն ամեն ասպարեզում, ամեն քայլափոխին իրական տեսնելով է, որ մեր զավակները պիտի սովորեն դրանցով ապրել, ընտանիք սիրել, ընկեր սիրել, Հայրենիք եւ Աստված սիրել: Արդ, սիրելի՛ հավատավոր ժողովուրդ, հանդերձավորված Տիրոջ փրկության պարգեւներով, հավատքով ու հույսով միշտ նորոգելով մեր հոգիները՝ սիրով, միաբան, միասիրտ ու միակամ ծառայենք ազգային մեր բոլոր իղձերի ու նպատակների իրագործմանը: Եվ Տերը, որ միշտ մեզ հետ է, տեսնելով մեր բարի գործերը, պիտի վարձատրի մեզ հարուցյալ կյանքով:*





*Քրիստոսի հրաշափառ Հարության բերկրալի ավետիսով եւ եղբայրական սիրով ողջույն ենք հղում Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու Նվիրապետական Աթոռների Գահակալներին՝ Ն. Ս. Օ. Տ. Տ. Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսին, Երուսաղեմի Հայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկյանին, Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Մութաֆյանին, Քույր Եկեղեցիների հոգեւոր պետերին՝ հայցելով Տիրոջ շնորհով լեցուն բազում արգասիք իրենց հոգեւոր առաքելության մեջ: Հայրապետական Մեր օրհնությունն ենք բերում մեր Սուրբ Եկեղեցու բարեջան բոլոր սպասավորներին եւ հավատավոր Մեր զավակներին ի սփյուռս աշխարհի եւ մաղթում բարօր կյանք, բարի ծառայություն ու առատ արդյունք:*

*Մեր օրհնությունն ու ողջույնն ենք բերում Հայաստանի Հանրապետության Նախագահ տիար Սերժ Սարգսյանին, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Նախագահ տիար Բակո Սահակյանին, հայոց պետական ողջ ավագանուն եւ Տիրոջ շնորհների հայցով մաղթում նոր հաջողություններ՝ ի սեր մեր Հայրենիքի եւ հանուր հայ կյանքի:*

*Ամենայն բարյաց մաղթանքով ողջունում ենք Հայաստանում հավատարմագրված դիվանագիտական առաքելությունների ղեկավարներին ու ներկայացուցիչներին: Թող Բարձրյալի հզոր Աջը հովանի լինի Ձեզ, Ձեր ժողովուրդներին եւ երկրներին, պետական այրերին՝ ժողովուրդների բարեկամության զարգացման աստվածահաճո առաքելության մեջ:*

*Փրկչի Հարության հոգենորոգ այս օրը, սիրելի՛ բարեպաշտ ժողովուրդ ի սփյուռս աշխարհի, միասնական մեր աղոթքը բարձրացնենք երկինք, որ Տիրոջ պարգեւած փրկության հավատն ու հույսը բոլոր մարդկանց հետ լինեն, մխիթարեն նեղությունների մեջ, զորացնեն դժվարությունների մեջ ու պահպանեն հաստատուն աստվածասեր ճանապարհներին: Թող Տերն օրհնի մեր ժողովրդին՝ ընթանալու դեպի խաղաղ ու բարեբեր հանգրվաններ՝ օրհնությամբ, շնորհով ու ողորմությամբ լեցուն: Ամուր ու անսասան մնանք հավատքի մեջ եւ անխախտ հույսի մեջ Ավետարանի, որպեսզի հարուցյալ մեր Տերը՝ Փրկիչը, ներկայացնի մեզ Բարձրյալ մեր Հոր առաջ անբիծ ու անարատ՝ Աստծուն հուսացյալ բոլոր հոգիների հետ:*

*Փառք ամենազոր Հարությանը Քո, Տե՛ր, այսօր եւ հավիտյանս. ամեն:*

*Քրիստոս յարեաւ ի մեռելոց.*

*Օրհնեալ է Յարութիւնն Քրիստոսի:*

# ԱՎԵՏՄԱՆ ՍՐԲԱՊԱՏԿԵՐԸ ՎԵՐԱԴԱՐՁՎԵՑ ԱՐՑԱԽԻ ԹԵՄԻՆ



Ապրիլի 7-ին Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին նշեց իր կարեւորագույն տոներից մեկը՝ Ավետումը: Այս տոնն Արցախում նշանավորվեց աննախադեպ մի իրադարձությամբ. ԼՂՀ իշխանությունների նախաձեռնությամբ եւ անմիջական մասնակցությամբ Արցախի թեմին հանձնվեց Ավետման սրբապատկերը, որը 30-ական թվականներից ի վեր պահպանվում էր Ստեփանակերտի պատմաերկրագիտական թանգարանում:

1933 թ., երբ Խորհրդային Ադրբեջանի իշխանությունների կողմից փակվեց Արցախի թեմը, արցախյան եկեղեցիների ողջ գույքը բռնագրավվեց եւ հայտնվեց Բաքվում: Հայ ազգային գործիչների ջանքերով հնարավոր եղավ պահպանել միայն Գանձասարի վանքի Ավետման սրբապատկերը, որն էլ ապրիլի 7-ին՝ Արցախի թեմի վերաբացման 20-ամյակի տարեդարձին, որոշվեց վերադարձնել նրան, ում ժամանակին պատկանել է:

Հանդիսավոր արարողությունն սկսվեց Ստեփանակերտի պատմաերկրագիտական թանգարանից, որտեղ թանգարանի տնօրեն Մելանյա Բալայանն ու Արցախի թեմի առաջնորդ Պարգեւ արք. Մարտիրոսյանը փաստաթղթերով ու ստորագրություններով վավերացրին հանձնման եւ ընդունման ակտը:

Արարողության մասնակիցները մեծ թափորով թանգարանից ուղեւորվեցին դեպի Ստեփանակերտի Վերածննդի հրապարակ:

Ավետման սրբապատկերը դեպի Գանձասարի վանք ճանապարհելու էին եկել ԼՂՀ ղեկավարությունը՝ նախագահ Բակո Սահակյանի գլխավորությամբ, Արցախի հավատացյալ ժողովուրդը:

Իր խոսքում Պարգեւ սրբազանը երախտագիտություն հայտնեց հանրապետության իշխանություններին՝ ցուցաբերած վերաբերմունքի համար. «Իշխանությունների այս հոգատարությունը հազարապատիկ պիտի օրհնվի եւ հազարապատիկ պիտի վերադարձվի Աստծո կողմից՝ Իր մեծագույն օրհնությամբ»,- նշեց սրբազան հայրը:

ԼՂՀ մշակույթի եւ երիտասարդության հարցերի նախարար Լեռնիկ Հակոբյանը, կարեւորելով օրվա խորհուրդը, նշեց, որ այն ինքնին նոր մոտեցում է պետություն-եկեղեցի հարաբերություններում: Ըստ նախարարի՝ հայ ժողովուրդը եւ նրա իշխանությունները մշտապես կարեւորել են եկեղեցու ազգապահպանման դերը եւ երանությամբ են հիշել այն հոգեւոր հովիվներին, ովքեր իրենց ազգային անկախությամբ ծառայել են Աստծուն: «Ես համոզված եմ, որ մեզ հետ այսօր ցնծում են մեր ազգի անգերազանցելի սրբերի՝ սուրբ Գրիգոր Լուսավորչի եւ սուրբ Տրդատ Մեծ արքայի հոգիները եւ մեզ առաջնորդում դեպի Գանձասար»,- ասաց Լ. Հակոբյանը: Պարգեւ արք. Մարտիրոսյանի եւ Արցախի թեմի հոգեւորականների մասնակցությամբ կատարվեց Արցախ աշխարհի անդաստանի օրհնությունը: «Թող Աստվածամոր օրհնությունն անսպառ լինի Արցախ աշխարհից, որպեսզի մեր երկիրը հարատեւի սիրո եւ հավատքի մեջ, լինի ինքնիշխան»,- ասաց Պարգեւ սրբազանը:



Հանդիսավոր արարողության մասնակիցների ուղեկցությամբ Աստվածամոր սրբապատկերը գտավ իր նախկին հանգրվանը՝ Սուրբ Հովհաննես Մկրտիչ եկեղեցու խորանի ճիշտ այն տեղում, որտեղ տեղադրված էր նախքան Պատմաերկրագիտական թանգարանում հայտնվելը:

Ի նշանավորումն Ավետման տոնի՝ մատուցվեց սուրբ պատարագ, իսկ Ստեփանակերտից եկած բազմաթիվ ուխտավորներ ստացան սուրբ հաղորդություն: «Երանի մեզ, որ Աստծո այսպիսի աղախին լույս աշխարհ եկավ: Եթե նա չլիներ, մեր փրկությունը տեղի չէր ունենա: Մարիամ Աստվածածինը, դառնալով մայրը մարդկության, ամենաողորմած սրբագույնն է մեզ համար: Չի կարող մայրը չարձագանքել, երբ իր զավակն աղերսում է ու աղաչում»,- ասաց թեմի առաջնորդը՝ կոչ անելով հավատացյալ ժողովրդին իրենց աղոթքն ուղղել առ Աստված, դիմել Աստվածածնի բարեխոսությանը, քանզի մեր՝ Արցախ աշխարհի հովանավորն ու բարեխոսն է եղել Մարիամ Աստվածածինը:

*Դիվան Արցախի թեմի*

# ԱՎԱԳ ՇԱԲԱԹ



*Սուրբ Հարությանը նախորդող շաբաթը նվիրված է Փրկչի երկրային կյանքի վերջին օրերին: Այս շաբաթն անվանվում է Ավագ կամ Չարչարանաց շաբաթ, որովհետեւ յուրաքանչյուր օր մեզ հիշեցնում է Քրիստոսի տառապանքները, մահն ու թաղումը: Այն ամենամեծն է իր գլխավոր իրադարձություններով:*

**Ավագ երկուշաբթին** անպտուղ թզենու հիշատակության օրն է: Երուսաղեմ հանդիսավորապես մուտք գործելուց հետո՝ երկրորդ օրը, երբ Նա Բեթանիայից Երուսաղեմ էր վերադառնում, քաղց զգաց եւ ճանապարհի վրա տեսնելով մի թզենի՝ մոտեցավ ծառին: Նրա վրա պտուղ չգտնելով՝ ասաց. «Այսուհետեւ քեզնից հավիտյան պտուղ թող չլինի»: Եվ նույն պահին թզենին չորացավ» (Մատթ. ԻԱ 18-19):

Տերեւազարդ, բայց անպտուղ թզենին հիշեցնում էր ցուցամոլ ու կեղծավոր փարիսեցիներին եւ այն հավատացյալներին, որոնք կառչում էին կրոնական ծեսերից ու հավատալիքներից, սակայն անպտուղ էին այդ թզենու նման, այսինքն՝ զուրկ էին բարի գործերից: Ուստի թե՛ մեկը եւ թե՛ մյուսը անեծքի ենթարկվեցին. թզենին չորացավ, իսկ նրանք մերժվեցին Աստծու կողմից:

Այսպիսով, եկեղեցական սրբազան հայրերի վկայությամբ, անպտուղ թզենին պատկերում է իրեական այն խառնամբոխը, ուր Հիսուս Քրիստոսը չգտավ իրական՝ հոգեւոր պտուղ, այլ միայն օրենքի երեսպաշտ կատարումը, որը Նա մերկացրեց ու անիծեց: Այդ թզենին պատկերում է այն հոգիներին, որոնք զուրկ են զղջման գիտակցությունից:

**Ավագ երեքշաբթի** օրը հիշատակվում է Մատթեոսի Ավետարանում նկարագրած Տասը կույսերի առակը (տե՛ս Մատթ. ԻԵ 1-13): Նրանք ուշ երեկոյան, լապտերները բռնած, եկել էին դիմավորելու փեսային: Սակայն երբ փեսան ուշանում է, բոլորը քուն են մտնում: Եվ ահա կեսգիշերին գալիս է փեսան ու բոլորին արթնացնում իր մեծաշուք մուտքով: Կույսերից հինգը, որ ավելի խելացի ու խորաթափանց էին, հավելյալ յուղ էին վերցրել: Նրանք հեշտությամբ վառեցին արդեն հանգչող լապտերներն ու մտան հարսանյաց սրահ: Սակայն մյուսներին չի հաջողվում ուղեկից լինել, քանի որ յուղ չունենալու պատճառով գնացել էին գնելու, ուստի երբ վերադարձան, դռներն արդեն փակ էին:

Այս առակում փեսան Ինքը՝ Աստվածորդին է, հարսանյաց սրահը երկնային արքայությունն է, տասը կույսերը խորհրդանշում են ամբողջ մարդկային ցեղը, իսկ նրանց լապտերների յուղը՝ ողորմությունն ու մարդասիրությունը: Կույսերի ննջելը ցույց է տալիս գերեզմանում բոլորիս ննջելը, իսկ փեսային ընդառաջ գնալը՝ գերեզմանից հարություն առնելը: Ուստի յուրաքանչյուր քրիստոնյա հինգ իմաստուն կույսերի օրինակով պետք է հարատեւի հոգեւոր արթնության մեջ, որպեսզի ժառանգի հավիտենական կյանքը:

**Ավագ չորեքշաբթին** մեր Տեր Հիսուս Քրիստոսի մատնության հիշատակության օրն է: Այդ օրն արդեն քահանայապետերը որոշել էին խորամանկությամբ բռնել Հիսուսին ու սպանել: Տերն այդ գիշեր անցկացրեց Բեթանիայում՝ Սիմոն Բորոտի տանը: Այդ ժամանակ Հուդան, որ տասներկու առաքյալներից մեկն էր, Տիրոջն ու իր Ուսուցչին հանձնեց քահանայապետերի ու օրենսգետների ձեռքը եւ փոխարենը երեսուն արծաթ դրամ ստացավ:

Հայ Եկեղեցում Ավագ շաբաթվա առաջին երեք օրերին հանդիսավոր արարողություններ չկան՝ չհաշված Տասը կույսերի հիշատակին նվիրված երեկոյան ժամերգությունը: Այդ օրերի ընթերցումները վերաբերում են Փրկչի կյանքի վերջին դեպքերին:

Ավագ շաբաթվա օրերից իր խորհրդավորությամբ առանձնահատուկ տեղ է գրավում **Ավագ հինգշաբթին**: Այդ օրը Հիսուսի տասներկու առաքյալներն իրենց Վարդապետի հետ վերջին անգամ ընթրիք կազմակերպեցին, որի ընթացքում հաստատվեցին Ս. Հաղորդության խորհուրդն ու Ոտնլվան:

Ինչպես Երուսաղեմ մտնելուն, այնպես էլ վերջին ընթրիքին Հիսուսը մասնավոր հանդիսավորություն տվեց: Ս. Զատկի նախօրեին Քրիստոսը պատվիրեց Իր աշակերտներին՝ ասելով. «Գնացե՛ք քաղաք այսինչ անձի մոտ եւ նրան ասացե՛ք. «Վարդապետն ասում է. «Իմ ժամանակը մոտեցել է, քեզ մոտ եմ անելու Զատիկը՝ Իմ աշակերտների հետ միասին»: Եվ աշակերտներն արեցին, ինչպես Հիսուսն էր իրենց հրամայել, ու պատրաստեցին զատկական ընթրիքը» (Մատթ. ԻԶ 18): Ընթրիքի խորհրդավորությունն ավելի մեծացավ, երբ «Հիսուսը վերցրեց հացը, օրհնեց ու կտրեց եւ տվեց աշակերտներին՝ ասելով. «Առե՛ք, կերե՛ք, սա է Իմ մարմինը»: Եվ բաժակ վերցնելով՝ գոհություն հայտնեց Արարչից, տվեց նրանց ու ասաց. «Խմեցե՛ք դրանից բոլորդ, որովհետեւ դա է նոր ուխտի իմ արյունը, որ թափվում է շատերի վրա՝ մեղքերի թողության համար» (Մատթ. ԻԶ 26):

Այսպես Քրիստոսի կողմից հաստատվեց Ս. Հաղորդության խորհուրդը: Ուստի եկեղեցում մատուցվող ս. պատարագն ունի աստվածադիր ծագում. այն իր սկզբնական հաստատումն ստացել է Հիսուս Քրիստոսի կողմից: Ինչպես Հիսուս Քրիստոսը Կանայի հարսանիքում ջուրը գինու վերածեց, այնպես էլ այժմ հացը խորհրդավոր կերպով դառնում է Նրա սուրբ Մարմինը, իսկ գինին՝ անարատ Արյունը, որին հասու ենք լինում հավատքով ու սիրով:

### ՈՏՆԼՎԱ

Ընթրիքից հետո Հիսուսը «վեր կացավ սեղանից, մի կողմ դրեց զգեստներն ու մի սրբիչ վերցնելով՝ կապեց մեջքին: Եվ ապա ջուր վերցնելով՝ լցրեց կոնքի մեջ եւ սկսեց Իր աշակերտների ոտքերը լվանալ եւ սրբել» (Հովհ. ԺԳ 4-6):

Հայ Եկեղեցու արարողություններում առանձնահատուկ տեղ է գրավում Ոտնլվայի կարգը: Քրիստոսի կյանքից վերցված այդ յուրօրինակ դրվագը մինչ օրս հիշատակվում է եկեղեցում. բարձրաստիճան հոգեւորականը եկեղեցու խորանում հանդիսավորապես լվանում եւ յուղով օծում է տասներկու եկեղեցական սպասավորների ոտքերը:



Ոտնլվայի ծիսակարգի հեղինակ է համարվում ս. Եփրեմ Խուրի Ասորին: Այն հայոց Գրիգոր Վկայասեր կաթողիկոսի կողմից թարգմանվելուց հետո մտնում է Հայ Եկեղեցու ծիսակարգ եւ հետզհետե հարստացվում գեղեցիկ շարականներով ու աղոթքներով:

**Ավագ ուրբաթ** օրը հիշատակվում են Աստվածորդու խաչելությունը եւ համայն մարդկության համար կրած չարչարանքները: Այդ օրվա յուրաքանչյուր ժամ մի նոր տառապանք էր, որ կրեց Հիսուսը: Եվ այդ ամենը եղավ մարդու պատճառով: Նույն մարդը մատնեց, ծաղրեց ու անարգեց եւ ի վերջո խաչի սյանը բարձրացրեց իր Փրկչին ու Տիրոջը:

Փրկչական ծրագրի ավարտին Հիսուսը նախ պետք է մեռներ երկրի վրա, ինչն աշակերտների ու այլ մարդկանց հետ Իր զրույցներում բազմիցս ակնարկում էր: Սակայն ժողովրդի համար անհասկանալի էին Վարդապետի խորհրդավոր բառերը:



Եվ ահա լրացավ այն ժամը, որի համար Բանն Աստված երկիր էր իջել: Այդ ժամը բոլորովին տարբեր էր մյուսներից: Այդ ժամին մարդը մահվան դատապարտեց Աստծու Միածին Որդուն՝ գերադասելով մարդասպանի կյանքը: Այդ ժամին արեւն անգամ սարսափեց անարդար տեսարանից ու շրջեց հայացքը, իսկ «տաճարի վարագույրը վերեւից մինչեւ ներքեւ պատռվեց, երկիրը շարժվեց, ժայռերը ճեղքվեցին, գերեզմանները բացվեցին, եւ ննջեցյալ սրբերի բազում մարմիններ հարություն առան, իսկ հարյուրապետը եւ նրանք, ովքեր իր հետ Հիսուսին պահպանում էին, երբ տեսան երկրաշարժը եւ պատահածները, սաստիկ վախեցան ու ասացին. «Արդարեւ, Աստծու Որդի էր սա» (Մատթ. ԻԷ 54):

Ըստ եկեղեցական օրացույցի՝ ուրբաթ օրը եղան Տիրոջ չարչարանքներն ու խաչելությունը: Այդ օրվա հիշատակությունը կատարվում է հինգշաբթի երեկոյան եւ կրում է «Խավարման կարգ» անունը: Այդ օրը կարդում են Հիսուսի կրած չարչարանքների ամբողջ ուղին հիշեցնող դրվագները. Գեթսեմանիի պարտեզում աղոթելը, Հուդայի մատնությունը, քահանայապետերի՝ Աննայի եւ Կայիափայի մոտ տարվելն ու հարցաքննվելը, ծեծվելն ու անարգվելը, Պետրոսի՝ երեք անգամ ուրանալն ու զղջալը: Իսկ ուրբաթ օրը եկեղեցում նշվում են Քրիստոսի՝ խաչից իջեցման հիշատակն ու թաղումը: Այդ օրը պատարագ չի մատուցվում, քանզի Ինքը՝ Քրիստոսը, կենդանի զոհ դարձավ: Առավոտյան ժամերգության ընթացքում կարդացվում են Ս. Ավետարանից հատվածներ. Հիսուսի տարվելը հռոմեական կուսակալ Պիղատոսի մոտ, մահվան վճիռը, Գողգոթայի վրա խաչվելը, արեւի խավարումը, մահը: Նույն երեկոյան կատարվում է թաղման կարգը, որի ընթացքում երգվում է նաեւ Հովսեփ Արիմաթացու գրած «Սուրբ Աստուածը»:

*Արմեն սրկ. ԽԱՉԱՏՐՅԱՆ*

## Ցավակցագիր Հռոմի Սրբազան Քահանայապետին

Ապրիլի 6-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը ցավակցական գիր է հղել Հռոմի Սրբազան Քահանայապետ Բենեդիկտ ԺԶ պապին՝ Կենտրոնական Իտալիայում տեղի ունեցած սոսկալի երկրաշարժից զոհվածների համար:

«Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից մեր սրտակցությունն ու աջակցությունն ենք բերում Ձեզ դժվարին այս պահին՝ հայցելով Տիրոջ զորակցությունը բոլոր տուժածներին՝ շուտափույթ հաղթահարելու փորձությունները ու դժվարությունները, ինչպես նաեւ Ս. Հոգու մխիթարությունը զոհվածների հարազատներին»,- ասվում է Նորին Սրբության ցավակցագրում:

Վեհափառ Հայրապետն աղոթքով հայցել է Աստծո օգնականությունը Իտալիայի ժողովրդին, ուժ եւ կարողություն մաղթել Սրբազան Քահանայապետին:

## Վեղարի տվչություն Տ. Խորեն աբեղա Հովհաննիսյանին

Ապրիլի 5-ին՝ Ծաղկազարդի տոնին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ կատարվեց Տ. Խորեն աբեղա Հովհաննիսյանի վեղարի տվչությունը՝ ձեռամբ Արարատ եպս Գալթագչյանի:

2002 թ. օգոստոսի 7-ին հայրապետական տնօրինությամբ Տ. Խորեն աբղ. Հովհաննիսյանը կարգալույծ էր հռչակվել՝ հոգեւոր ծառայությունը ինքնակամ լքելու համար: Նկատի ունենալով Նշան (Տ. Խորեն աբեղա) Հովհաննիսյանի ներկայացրած զղջումի գիրը՝ Ամենայն Հայոց Հայրապետն ընդառաջեց նրա խնդրանքին եւ սահմանեց մեկամյա ապաշխարության շրջան Գեղարդավանքում, որի բոլորումից հետո արտոնեց նրա վերականգնումը կուսակրոն քահանայության կարգի մեջ:

Տ. Խորեն աբեղա Հովհաննիսյանն իր ծառայությունը պիտի բերի որպես Հնդկահայոց հոգեւոր հովիվ եւ Կալկաթայի Մարդասիրական ճեմարանի կառավարիչ:

## ՍՈՒՐԲ ԶԱՏԻԿԸ ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ԱՉՔԵՐՈՎ

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Քրիստոնեական դաստիարակության կենտրոնը թեմերի եւ ՏԻՄ-երի հետ համագործակցությամբ մի շարք քաղաքներում (Էջմիածին, Արտաշատ, Մասիս, Ապարան, Աշտարակ, Աբովյան, Չարենցավան, Հրազդան, Նոր Հաճն, Սեւան, Սպիտակ, Վանաձոր, Գյումրի) կազմակերպել է «Սուրբ Զատիկը մանուկների աչքերով» խորագիրը կրող միջոցառումների շարք՝ Սուրբ Հարության տոնի առիթով:

Ծրագրի շրջանակներում ապրիլի 14-22-ը մանկապարտեզներում կանցկացվեն տոնական ցերեկույթներ եւ կկազմակերպվեն ցուցահանդեսներ:

Մայիսի 2-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում տեղի կունենա տոնական եզրափակիչ միջոցառում, որի շրջանակում կգործի նաեւ ցուցահանդես, ուր կներկայացվեն մասնակից մանկապարտեզներից ընտրված աշխատանքներ: Լավագույն աշխատանքներ ներկայացրած մանկապարտեզներին կշնորհվեն պատվոգրեր եւ հատուկ մրցանակներ, իսկ մանկապարտեզներին ընդհանրապես կտրվեն վկայագրեր եւ խրախուսական նվերներ:

*Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի*
*Քրիստոնեական դաստիարակության կենտրոն*

## ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐ

# ԳՐԻԳՈՐ Թ ՄՈՒՍԱԲԵԳՅԱՆՑ

## (1439-1441/?)

1439 թ. նոյեմբերի 7-ին Կաֆայում գրված մի հիշատակարանի համաձայն՝ կաթողիկոս էր Գրիգոր Թ Մուսաբեգյանցը: Այնտեղ հիշվում է նաեւ Կաֆայի եպիսկոպոս Մաղաքիան: Շատ հնարավոր է, որ Գրիգորը կաթողիկոս ձեռնադրվեց նույն թվականի ամռանը, եւ լուրը հասցրել էր հայտնվել հեռավոր Ղրիմում: Մ. Օրմանյանն իրավացիորեն նշում է, որ եթե Ֆլորենցիա ուղարկված պատվիրակությունն առաքված լիներ Կոստանդին կաթողիկոսի կողմից, ապա վերջինս նախ պետք է Սիս գար եւ ոչ թե՝ Կաֆա: Թերեւս Յովսեփի ոտնձգությունները կաթողիկոսական աթոռի վրա երկար չէին տեւել, եւ Գրիգորը, որի նախընթաց կենսագրությունը հայտնի չէ, ձեռնադրվել էր կաթողիկոս: Ծանոթ չէ ոչ միայն ծննդավայրը, այլեւ ազգատոհմը: Նա հայտնի է իր հոր անունով, որը լինելով Մովսես՝ մահմեդականների բերանում վերածվել էր Մուսաբեգի: Հայրը, դատելով Մուսաբեգ անվանումից, իշխանական ծագում է ունեցել, ինչը, թերեւս, նպաստել է նրա որդու՝ կաթողիկոս ձեռնադրվելուն: Կոստանդինի սպանությունը, Յովսեփի շահագրգռությունները եւ Գրիգորի կաթողիկոսանալը ցնցեցին բուն Հայաստանի վարդապետներին: Նրանք այլեւս հույսեր չէին կապում Կիլիկիո կաթողիկոսության հետ, ուստի օրակարգի հարց դարձավ կաթողիկոսությունը Վաղարշապատ կամ Էջմիածնի վանք տեղափոխելու խնդիրը: Կիլիկիան կորցրել էր ոչ միայն իր քաղաքական նշանակությունը՝ դառնալով շրջակա իսլամական իշխանությունների ձեռքին խաղալիք, այլեւ իր եկեղեցական կերպարանքը, քանի որ ո՛չ ուսումն էր պատշաճ մակարդակի, ո՛չ եկեղեցական օրենքներն էին գործում, վանքերը քայքայված էին, վարդապետները՝ անարգված, հոգեւորականությունը՝ ստորացած: Դրան հակառակ՝ վիճակն անհամեմատ լավ էր բուն Հայաստանի թեմերում, որտեղ հատկապես ծաղկում էին Սյունիքի եւ Վասպուրականի հոգեւոր կենտրոնները:

Կաթողիկոսությունը բուն Հայաստան տեղափոխելու շարժման գլուխ անցան Յովհաննես Հերմոնեցին (Վայոց ձոր) եւ Թովմա Մեծոփեցին (Վասպուրական): Առաջինը Եկեղյաց գավառից էր եւ հաստատվել էր Հերմոնի վանքում: Նա, թերեւս, Երզնկացի էր եւ կրթվել էր Հերմոնի վանքում, այնուհետեւ աշակերտել էր Գրիգոր Տաթեւացուն եւ վերջինիս մահից հետո հաջորդել էր նրան: Նշված շրջանում նա էր առավել նշանավոր վարդապետներից եւ ուսուցիչներից, որը հայտնի է նաեւ Յովհաննես Կոլոտիկ կամ Գոլոտենց մականունով, սակայն այլ մանրամասներ հայտնի չեն: Հայտնի չէ անգամ մականվան ծագումը:

Տաթեւացու ոգով դաստիարակված Յովհաննես Հերմոնեցին կանգնեց կաթողիկոսությունը Էջմիածին տեղափոխելու շարժման գլուխ, որի ակունքներում ժամանակին կանգնած է եղել ինքը՝ Գրիգոր Տաթեւացին: Սակայն նման գործ իրականացնելու համար անհրաժեշտ էր նախապատրաստվել եւ խորհրդակցություններ անցկացնել: Այս ամենը կատարելուց հետո երկրի բոլոր ուղղություններով հրավերներ ուղարկվեցին՝ հավաքվելու բարի եւ օգտակար գործով: Շարժման մեջ էր ներառված պատմագիր Թովմա Մեծոփեցին, որը ծնվել էր Քաջբերունյաց գավառի Աղովիտ գյուղաքաղաքում՝ ազնվական Ստեփանոսի ընտանիքում: Նրա եղբայրն էր Գորգի մելիքը, որը նույն քաղաքի իշխանն էր: Նա ուսանել էր Մեծոփի, Սուխարու եւ Սալնապատի վանքերում, որից հետո՝ 1406 թ., տեղափոխվել էր Տաթեւ: Ուսումնառությունն ավարտելուց հետո հաստատվել էր Մեծոփի վանքում՝ որպես վանքի առաջնորդ: Տաթեւից հեռանալուց հետո անցել էր 35 տարի, եւ նա արդեն 60-ն անց ծերունի էր, սակայն՝ երիտասարդական ավյունով լի: Նա է, որ գրում է, թե Հայկազյան ազգի կաթողիկոսությունը Էջմիածին տեղափոխելու խնդիր է բարձրացվել, որի նախաձեռնողներից մեկը եղել է ինքը: Այլ խոսքով՝ եթե շարժման գլուխ կանգնած էր Յովհաննես Հերմոնեցին, ապա նրա աջ ձեռքն էր Թովմա Մեծոփեցին: Հերմոնեցուն հաջողվեց իր գաղափարի շուրջը համախմբել բուն Հայաստանի վարդապետներին ու եպիսկոպոսներին, որոնք գործնականում պատրաստ էին վերջ տալու Սսի աթոռին եւ վերակենդանացնելու սուրբ Գրիգորի աթոռը Էջմիածնում: Հիշյալ վարդապետների եւ եպիսկոպոսների մեջ մեծ ազդեցություն ունեին Արտազի կամ Մակվի եպիսկոպոս Գրիգորը եւ Հավուցթառի եպիսկոպոս Զաքարիան: Բավական բարդ էր Թովմա Մեծոփեցու կացությունը, քանի որ նրա վանքը սահմանակցում էր Աղթամարի կաթողիկոսության թեմերին, ըստ որում՝ վասպուրականյան կաթողիկոսությունը հավակնություն ուներ Ամենայն Հայոց կաթողիկոսություն կոչվելու: Այդ շրջանում Աղթամարի կաթողիկոսն էր Զաքարիան, որը նախատակ Զաքարիայի եւ վերջին Դավիթ կաթողիկոսի եղբորորդին էր: Զաքարիային հաջողվել էր խառը կացությունից դուրս գալ եւ կրկին հաստատել իրենց ընտանիքների իրավունքն Աղթամարի կաթողիկոսական աթոռին: Որքան էլ զարմանալի լինի, Թովմա Մեծոփեցուն հաջողվեց անգամ հիշյալ Զաքարիային իր կողմը գրավել՝ թերեւս նրան կերակրելով այն հույսով, որ Աղթամարի կաթողիկոսությունը պարզապես կտեղափոխվի Էջմիածին:

Թե շարժումն ինչպես էր զարգանում, ինչպիսի մրցակցություններ հանդես եկան, մեծավ մասամբ հայտնի չէ: Առավել կամ



պակաս տեղեկություններ պահպանել է լոկ Թովմա Մեծոփեցու «Պատմութիւնը»: Նա անգամ մեզ է հասցրել տեղեկություններ հանդիպումների եւ անգամ երազների մասին, սակայն նրա ուշադրությունից ինչ-ինչ պատճառներով դուրս են մնացել գործիչները եւ գործի հանգամանքները: Նրա պատմությունն էլ աչքի է ընկնում անարվեստ, հետ ու առաջ գրությամբ եւ շփոթ ժամանակագրությամբ, ինչը Թովմա Մեծոփեցին փորձում է բացատրել իր տարիքով:

Կաթողիկոսական աթոռի տեղափոխումը Սսից Էջմիածին երեւույթ էր հայ իրականության համար: Բացի բարձր գաղափարներից՝ հիշյալ շարժման ընթացքում իրենց զգացնել տվին նաեւ անձնական շահագրգռությունները: Ավելորդ է ասել, որ տեղափոխության հարցում որոշակի շահագրգռություններ ունեին բուն Հայաստանի վարդապետներն ու եպիսկոպոսները: Չի բացառվում, որ անձնական ինչ-ինչ շահագրգռություններ ունեին նաեւ շարժման ղեկավարները, ինչը հենց սկզբից գրգռել էր Զաքարիա Աղթամարցի կաթողիկոսին, Գրիգոր Արտազեցուն, Զաքարիա Հավուցթառեցուն եւ Յովհաննես Հերմոնեցուն:

*Շարունակությունը՝ էջ 5*

# ՊԱՀՔԻՆ ԱՌՆՉՎՈՂ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԱՌԵՐ

*Սկիզբը՝ թիվ 6*

Բացի բուն պահեցողությունը նշող *պաս* եւ *ծոմ* բառերից, հայերենի բարբառներում կան բազմաթիվ բառեր ու արտահայտություններ, որոնք ուղղակի կամ անուղղակի առնչվում են պահեցողությանը: Այդ բառերը եւս վկայում են, որ պահքն առանձնակի իրադարձություն էր հավատացյալների կյանքում, որը նրանք դիմավորում էին տոնական պատրաստություններով ու շնորհավորանքներով: Բուն բարեկենդանի կիրակի երեկոյան կատարվող առտնին հանդեսը, երբ գերդաստանի բոլոր անդամները հավաքվում էին գերդաստանի մեծի օրհնությունն ստանալու եւ բերանները փակելով՝ Մեծ պահքը դիմավորելու, Երեւանում կոչում էին *բերանփակէք*: Ախալցխայում պահքն սկսելու նախորդ օրը կոչվում է *պասնուտ*:

Պահքի առաջին օրը միմյանց շնորհավորելն Արարատյան բարբառում կոչվում էր *պասշնորհավորէք*, Բուլանըխի խոսվածքում՝ *պասբարեւ*: Մուշում *պասբարեւ* նշանակում էր ծխական քահանայի տուն գնալով պահքը շնորհավորելը, ինչպես նաեւ նորափեսաների՝ այդ նպատակով աներանց տուն գնալը: Վանում Մեծ պասի առաջին կիրակին ուներ *թա՛՛լա՛՛լոսի կիրակի* անվանումը, յոթ շաբաթ տեւող Մեծ պասի շրջանը՝ *յօթշապթներաց*: Մեծ պահքի խորհրդանիշն էր պահոց օրերի համար ժամանակացույցի դեր կատարող խոշոր գլուխ սոխը կամ կարտոֆիլն ու բաղարջիկը՝ վրան յոթ փետուր՝ առաստաղից կախված: Ժողովուրդը դա անվանում էր *ախելուծ* (Ալեքսանդրապոլ, Ախալքալաք), *ախլոճ* (Ախալցխա), *ակլատիզ* (Բաղեշ, Երեւան, Նոր Բայազետ, Վան), *աքլատիզ* (Բուլանուխ), *գոգռոզ* (Բաբերդ), *խուլուճիկ* (Քեսապ), *խուխուլիճ* (Նիկոմեդիա), *խուլուրտիք*, *խուլուճիկ* կամ *պահք-ուտեմ* (Բութանիա), *մոռմոռոզ* (Պոլիս), *մըռմըռաս* (Ղրիմ, Նոր Նախիջեւան), *ֆըռֆըռիզ*, *ֆըռիզ* (Սասուն), *ակլատիզ* (Վան) եւ այլն: *Ակլատիզը* նաեւ երեխաներին վախեցնելու երեւակայական կենդանի էր:

Մեծ պահոց առաջին երկուշաբթին Կեսարիայում, Նոր Նախիջեւանում, Պոլսում կոչում էին *բակլախորան*, *խորանի խորան*, Չենկիլերում՝ *կատուկախի օր*:

Պահոց օրերի կերակուրները տոնական էին եւ տարբերվում էին ուտյաց օրերի կերակուրներից: Թե՛ պահոց, թե ուտից օրվա կերակուրները բուլանըխցիների կողմից մեկ



անվանում ունեին՝ *զատ*: Ագուլիսում պահոց կերակրատեսակներին տրվում էին *պասվան*, Վանում, Մուշում՝ *պախսավուր* որոշիչները. *«Պախսավուր ճաշ եմ իփէ»*,- կասեր վանեցին: Պահքի հիմնական ուտեստը՝ նորածիլ ցորենով պատրաստված քաղցրեղենը, Ղարաբաղում, Մուշում, Լոռիում, Նոր Բայազետում, Շիրակում եւ այլուր կոչում էին *ածիկ (ած=ծիլ)*: Տոնական կերակրատեսակներն անվանվում էին հետեւյալ բառերով՝ *վըռիկ* կամ *չօրբա* (Բուլանըխ), *խաշընծուռ*, *փայնաքոշ*՝ ձեթով բաղարջ (Վան), *պասէքթան* (Մուշ), *աղամաղ* (=աղ.)՝ սմբուկի գլխի չորացրած, խաշած կեղեւ՝ համեմունքով (Մարաշ), *պաղապուր*՝ լոբով եւ կորկոտով խյուս (Երզնկա), *տաք-տաք կլոլակ*՝ սոխով, հոնով, սիսեռով, *կըրկէնի*՝ անալի եւ անխմոր հաց, *լոբահատիկ*, *հունաթթու* (Ղարաբաղ), *տըրա*, *օրուսպու կորկոտ*՝ ոսպից եւ կորկոտից (Ադանա), *թօփիկ* (Պոլիս), *կըլոճ* (Նոր Բայազետ) եւ այլն:

Պահքն ավարտելը՝ խթումը, եւս կատարվում էր առանձնակի հանդիսավորությամբ, որ բնորոշվում էր մի շարք հոմանշային արտահայտություններով ու բառակապակցություններով, օրինակ՝ *պահքի նավակատիք*, *խըթման իրիգուն*, *խըթման օր* (Երզնկա), *ավագ-կատիկ* կամ *կատիկ* (Վան), *թաթախվէլ* կամ *թաթախում* (Երեւան, Ղարաբաղ), *թաթաղում* (Ագուլիս), *խըթում* (Վան, Սասուն, Ախալցխա, Այնթապ, Արաբկիր, Երզնկա, Խարբերդ, Մարաշ, Պոլիս, Արարատյան), *բահքը փանալ* (Պոլիս), *պահսը պա՛՛նալ* (Ղարաբաղ) եւ այլն:

Համշենում պահքը լուծում էին *հաղորդի հավկիթ*-ով, որը Ավագ հինգշաբթի օրը խաշած ձու էր, որով շաբաթ ճրագալույցի պատարագից հետո լուծում էին պահքը: Խթման երեկոյին ձու ուտելով պահքը բանալը վանեցիներն անվանում էին *պերանպացեք*, սվեդիացիները՝ *խթմէլ*, սասունցիները՝ *խըթիլ*, նորբայազետցիները՝ *զատկվիլ*, որ կատարում էին մատաղի միս ուտելով:

Խթումին ննջեցյալի հոգու համար բաշխվող հալվան կոչում էին *ճաշ*: Շուրիշկանցիներն Ավագ շաբաթ ճրագալույցի պատարագից հետո պահքը լուծում են ձվածեղով եւ համեմով պատրաստված հատուկ ուտեստով, որը կոչում են *քուքու*:

Ժողովրդի կողմից պասի թեմայով կերտվել են մի շարք բառեր, առածներ ու ասացվածքներ. օրինակ՝ *հորթաթող* (Երեւան, Մուշ) «հիսնական պահոց շաբաթ օրը, երբ ցրտերի պատճառով հորթերը արածեցնելու չէին տանում», *պասապերան* (Վան)՝ «մի բանից անմասն մնացած», *պասոտ* (Ղարաբաղ) «ուտյաց մթերքին քսված պահոց կերակուր, որը ապականված էր համարվում», *պասահըել* (Վան)՝ «երկար պաս պահելուց հիվանդանալ», *պասոտել* (Ղարաբաղ)՝ «պահոց մթերքին ուտյաց կերակուր քսվել ու ապականվել». *Հացը մսին է քսվել, պասոտել*:

*Պասահան անել* (Արարատյան), *պասալվա անել* (Ղարաբաղ)՝ «Մեծ պահքի երկուշաբթի առավոտյան հանդիսավոր արարողությամբ կաթսաները լվանալ, որպեսզի ուտյաց կերակուրներից հետք չմնա», *կայծակի օր* (Բաղեշ)՝ «Մեծ պահոց առաջին շաբաթվա չորեքշաբթի օրը, որը սուրբ էր համարվում եւ կայծակնահարությունից զերծ կարող էին մնալ աղոթասացությամբ», *պախսը եփել* (Վան)՝ «մեկին լավ դաս տալ, լուրջ վնաս հասցնել» (*Իմ մէր չըմեռնի, ես ինոր պախս իփեցի*), *պաս ու պանդոխ մնալ* (Բուլանուխ)՝ «յուղեղենից կամ մսեղենից զուրկ կյանք անցկացնել», *ժամով անել* (Ղարաբաղ)՝ «խթման երեկոյին ձուն եկեղեցի տանելով՝ առանձնակի ծեսով նշանավորել»:

*Վարդավառին պահքը բռներ է* (Պոլիս) արտահայտությունն ունի հեգնական իմաստ եւ չակերտավոր նշանակում է «շատ խելացի է»:

Ծննդյան պահքին հարիսա պատրաստելու բուսատեսակներից են *Մարիամ Աստվածածնա պանջարը* (Վան), *տոնի բանջարը* (Խիան), *սպիտակուկը* (Մուշ, Սասուն), *ա՛՛սպա՛՛ծա՛՛մօր պա՛՛նջա՛՛րը* (Մոկս) եւ այլն:

Պաս չպահելը *պասակեր* (Երեւան), *պահքկեր* (Եվդոկիա), *պախսակեր* (Վան), *պասանկեր* (Բուլանըխ) խիստ բացասական ու հանդիմանական բառերով է կոչել մեր ժողովուրդը: Բուլանըխցիներն ունեին *պասակե՛ր թուրք* խիստ նախատական արտահայտությունը: Պահեցողությունը խախտելը եւս պարսավելի էր, ըստ որի ստեղծվել են *բահքը ավրել*, *բահքը ուտել* (Պոլիս), *պահքը կոտրել* (Մուշ), *պասոտիլ* (Համշեն) բայերը: Պահքի ընթացքում թե՛ պահոց, թե՛ ուտյաց կերակուրներ ուտողներին վանեցին բնորոշում էր *Էրկուսապըռնիկ* կամ *էրկումըսրէն* անարգական բառերով:

Ժողովրդի մեջ կային նաեւ պահոց օրերի հետ կապված նախապաշարումներ: Չենկիլերի գյուղացիների մեջ նախապաշարմունք կար, ըստ որի՝ եթե Մեծ պահոց առաջին երկուշաբթի օրը կատուն ոտքերից կախեն, հմուտ մուկ բռնող կդառնա. երեւույթը կոչում էին *կատուկախ*: Մարաշցիներն ունեին *հարբածատոն*. Մեծ պահոց առաջին երկուշաբթի օրը կանայք չէին մանում, որ չլինի թե ամբողջ տարին գինովցածներին հանդիպելու պատճառով ճախարակը կոտրեն կամ ճաղը ծռեն:

Ընդհանրապես պարսավելի էր Մեծ պահոց սուրբ համարված շաբաթ օրերը աշխատելը: Արաբկիրում այդ օրը բնորոշում էին *անեծքմոր*, Պոլսում՝ *մայրը տղան անիծած օր*: Ըստ այդ նախապաշարումի՝ բարեկենդանի շաբաթ օրը աշխատողն արժանանում էր մոր անեծքին եւ զրկվում աշխարհի բարիքներից:

Բերված օրինակները վկայում են, որ մեր ժողովրդի կողմից տոնականորեն ընդունված պահքն իր բառային արտացոլումն է գտել ոչ միայն գրական հայերենում, այլեւ ժողովրդական խոսքում. ի դեպ, հայերենի բարբառներում բառապաշարի այդ շերտն ավելի հարուստ է, քան գրական հայերենում:

***Հայկանուշ ՄԵՍՐՈՊՅԱՆ***
***Բանասիրական գիտ. թեկնածու, դոցենտ***

# ՍՏԵՓԱՆՈՍ ՏԱՐՈՆԵՑԻ ԱՍՈՂԻԿ

## (953/958-1041/1049)



*Սկիզբը՝ թիվ 6*

Ըստ պատմահոր ներկայացնում է Աղվանքի ծագումը: Ավանդույթին հավատարիմ՝ Ասողիկն իր հերթին է առասպելաբանում. «Իսկ Տորք անվանվածին, որը Հայկակի թոռ Պասքամի սերունդից էր, եւ որին սաստիկ դժնադիմության պատճառով Անգեղյա էին կոչում, արեւմտյան կողմերի կուսակալ է հաստատում եւ երեսի անպիտանիության պատճառով ազգի անունն էլ Անգեղյա է կոչում: Սրա մասին երգերը վկայում են, թե (ճՒ) հարյուր քսան փղի ուժ ուներ եւ ձեռքը գցելով որձաքար վեմերին՝ տաշում էր ցանկացած ձեւով, եղունգով փորագրում, քանդակում էր արծիվներ կամ որեւէ այլ բան: Սա, Պոնտոսի ծովի եզերքին հանդիպելով թշնամու նավերին, բլրաձեւ ժայռեր է նետում ծովը՝ նավերի հետեւից, եւ ջրերի պատռվելուց բազմաթիվ նավեր են խորտակվում, իսկ մնացյալներն էլ ալեկոծությունից բազում մղոններ հեռու են քշվում. եւ այս թեպետ եւ առասպել, սակայն այսպիսի զրույցների արժանի էր այդ մարդը» (I, Ե, էջ 82):

Առասպելներն ուղեկից են նաեւ Վաղարշակին հաջորդող Արշակին, որը հաղթելով պոնտացիներին՝ ծովեզերքին կանգնեցնում է երկնաքարից շինված մի արձան, որի թիկունքին խոր մխրճում է օձերի եւ գեռունների արյան մեջ թաթախված իր «բոլորակ տեգով նիզակը»: Պոնտացիներն արձանը պատվում են «իբրեւ աստվածների գործ»: Սակայն, երբ նրանց վրա է հարձակվում Արշակի որդի Արտաշեսը, պոնտացիներն արձանը ծովն են նետում: Այս Արտաշեսն իր պատկերով դրամ է կտրել տալիս, ձերբակալում է լյուդիացիների Կրեսոս թագավորին եւ ուզում է տիրել ամբողջ Արեւմուտքին: Նավերի բազմությամբ ծածկում է ամբողջ օվկիանոսը՝ Միջերկրականը: Նա Հելլադայից Հայաստան է բերում Դիոնիսիոսի, Արտեմիսի, Աթենասի, Հեփեստոսի եւ Ափրոդիտեի արձանները եւ դրանք հասցնում Անի ամրոց:

Ըստ Ասողիկի՝ Արտաշես Ա-ին հաջորդում է նրա որդի Տիգրանը, որը Մաժաքն ու Միջերկրայքը թողնելով իր քրոջ ամուսին Միհրդատին՝ արշավում է դեպի Պաղեստին եւ հաղթանակով վերադառնում: Տիգրանը հաղթում է Գաբիանոսին եւ Կրասոսին: Իսկ նրա քեռորդի պատանի Միհրդատը (Երկրորդ), որին Տիգրանն ազատել էր գերությունից, դավաճանաբար անցնում է հռոմեացիների կողմը, նրանցից ստանում Մաժաքը, այն վերակառուցում եւ, ի պատիվ Կեսարի, անվանում Կեսարիա. «Դրանից հետո վերացվում է հայոց գերիշխանությունն այդ քաղաքի վրա» (I, Ե, էջ 86): Տիգրանին հաջորդում է նրա որդի Արտավազդը:

Ակնհայտ է, որ Ասողիկն Արտաշեսյան արքայատոհմը շփոթում է Արշակունիների հետ եւ առաջիններին համարում Արշակունի: Սա այն Արտավազդն է, որին գերելով՝ Անտոնիոսը նվեր է տանում Կլեոպատրային: Այս շփոթը գալիս է Խորենացուց:

Ըստ Ասողիկի՝ Արտաշեսի մահից հետո հաջորդում է Արգամը (Արշամ), իսկ սրան՝ Աբգարը, որի ժամանակները զուգադիպում են Քրիստոսի գործունեությանը: Այս ժամանակ հայոց մեհյաններում կախված էր Օգոստոսի պատկերը, քանի որ Հայաստանը երեք կողմից հարկատու էր Հռոմին: Աբգարը կառուցում է Եդեսիան եւ Մծբինից այնտեղ փոխադրում «իր արքունիքը, կուռքերին եւ մեհյանների վարժարանի մատյանները» (I, Ե, էջ 90): Եվ այդ կուռքերն էին Նաբու ու Բել (Բահալ) աստվածները եւ Բաթնիքաղ ու Թարաթա (կամ Դերկետո) աստվածուհիները: Աբգարը հավատում է, որ Փրկիչն Աստծու որդին է եւ թուղթ է ուղարկում, որ Նա գա եւ իրեն բուժի ցավերից: Փրկչի կարգադրությամբ նամակի պատասխանը գրում է Թովմաս առաքյալը, իսկ թուղթը բերում է Աբգարի սուրհանդակ Անանը, դրա հետ նաեւ՝ Փրկչի պատկերը (նկարը), որ կախում են «Եդեսացիների Ուռհա քաղաքում»: Փրկչի համբառնալուց հետո գալիս է Թադեոս առաքյալը՝ Թովմասի հրամանով, եւ բժշկում Աբգարին: Աբգարին հաջորդում է նրա որդի Անանոսը: Սա կտրում է Ադդեի ոտքերը, որն առաքյալներից նշանակված էր Եդեսիա քաղաքում: Վերջինիս մահվան վրեժը լուծվում է նրանով, որ «մարմարյա սյունը փուլ եկավ նրա [Անանոսի] վրա, ջարդեց նրա ոտքերը, եւ նա մահացավ» (I, Ե, էջ 93): Համարժեք մահ: Հաջորդում է Աբգարի քեռորդի Սանատրուկը, որը մահանում է որսի ժամանակ՝ պատահաբար նետից խոցվելով, ինչը նրա «սրբուհի դստեր» չարչարանքների վրեժն էր: Հաջորդը Երվանդն է, որը հռոմեացիներին է հանձնում Միջագետքը («Եվ այդուհետեւ վերացավ Հայոց իշխանությունը Միջագետքից», I, Ե, 94): Երվանդն արքունիքն Արմավիրից տեղափոխում է Երվանդաքար (Խորենացին գրում է՝ Երվանդաշատ): Սա քրմերի արձանները հավաքում է Ախուրյանի ափին կառուցած Բագարան քաղաքում եւ քրմապետ է կարգում իր եղբայր Երվազին: Հաջորդում է Սանատրուկի որդի Արտաշեսը եւ Երասխի ու Մեծամորի խառնվելու տեղում կառուցում Արտաշատը: Սա այնքան է բազմամարդացնում Հայոց աշխարհը, որ անմշակ հող չէր մնացել «ոչ լեռնային եւ ոչ էլ դաշտային, այնքան, որ շենացել էր [ամբողջ] երկիրը» (I, Ե, 96): Այսպես Խորենացուն երկրորդելով՝ պատմիչը շարադրում է իր խոսքը:

Սահմանաքարերն Ասողիկն այնպես է նկարագրում, ասես ինքը տեսել է. «Հրաման է տալիս քարերը տաշել քառակուսի ձեւով, մեջերը պնակաձեւ փոս անել եւ թաղել հողի մեջ եւ նրանց վրա քառակուսի կոթողներ կանգնեցնել՝ գետնից փոքր-ինչ բարձր» (I, Ե, էջ 95): Սրա օրոք սահմանվում են «շաբաթվա օրերի, ամիսների ու տարիների շրջանները», ստեղծվում է նավագնացություն, կառուցվում են կամուրջներ, հորինվում ձկնորսական գործիքներ, զարգանում է երկրագործությունը, որից հետո հումակերությունից (շաղախակերություն), որ բնորոշ էր հյուսիսային ազգերին, անցնում են եփակերության: Գահակալում է Արտավազդը, ով Արտաշատի կամրջով որսի գնալիս, ցնորքներից խելագարված, ընկնում է մի խորխորատ եւ խորասույզ լինում:

Հաջորդում է Տիրանը, որը երկու «օդագնաց» ձի ուներ, առավել թեթեւաշարժ, քան Պեգասը, որը մեռնում է՝ Եկեղյաց գավառում մնալով ձյան հյուսքի տակ:

Հաջորդներից Վաղարշը հիմնում է Վաղարշավանը՝ Երասխի եւ Մարցի միախառնման տեղում, պարիսպապատում է Վարդգեսի ամրակուռ ավանը Քասախ գետի վրա եւ անվանում Վաղարշապատ, որը կոչվում է նաեւ Նոր Քաղաք: Հաջորդում են Խոսրովի քաջագործությունները, որն Արտավանի սպանության դիմաց ասպատակում է Պարսկաստանը, խլում Ասորեստանը եւ այլ երկրներ:

*Շարունակությունը՝ էջ 6*

## ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐ

# ԳՐԻԳՈՐ Թ ՄՈՒՍԱԲԵԳՅԱՆՑ

## (1439-1441/?)

*Սկիզբը՝ էջ 4*

Թերեւս այդպիսի հավակնություններ չուներ միայն Թովմա Մեծոփեցին, սակայն նա էլ հույս ուներ, որ նախապատվությունը կտրվի Վասպուրականի հոգեւորականներին: Ահա այսպիսին էր կացությունը բուն Հայաստանում, երբ տեղի հոգեւորականները լուր առան Գրիգոր Թ Մուսաբեգյանցի կաթողիկոսանալու մասին:

Մինչ դեպքերն այսօրինակ զարգանում էին բուն Հայաստանում, Գրիգոր Մուսաբեգյանց կաթողիկոսը որեւէ լուրջ հակաքայլ չէր ձեռնարկում: Չի բացառվում, որ երեւի չէր էլ կարող: Թովմա Մեծոփեցին պարզ նշում է, որ Գրիգոր կաթողիկոսը, փաստորեն, չէր կառավարում Հայոց Եկեղեցին, քանի որ նա իր բազմաթիվ կեղծումների զոհն էր դարձել:

Դեռ նոր էր նա կաթողիկոսացել, երբ յոթ նոր եպիսկոպոս ձեռնադրեց: Եթե ընդունենք, որ եպիսկոպոսների թիվը պետք է ոչ թե Է (7), այլ Ե (5) լինի, ապա վիճակը չի փոխվում, քանի որ ձեռնադրությունները որոշակի շահագրգռությունների հետեւանք էին: Սա այնպես զայրացրեց Կիլիկիայի եպիսկոպոսներին ու վարդապետներին, որ նրանք, զզված հայրապետանոցի անկարգությունից, մեղադրեցին կաթողիկոսին Արեւելյան կամ բուն Հայաստանի եպիսկոպոսների ու վարդապետների առաջ: Բողոքը նրանք ուղարկեցին Թովմա Մեծոփեցուն՝ խնդրելով օր առաջ գործի ձեռնարկել: Փաստորեն հայրապետանոցը Կիլիկիայից Էջմիածին փոխադրելու խնդիրն այս ամենի հետեւանքով համազգային բնույթ ձեռք բերեց, քանի որ Արեւելյաններն ստացան Կիլիկիայի եպիսկոպոսների ու վարդապետների աջակցությունը, թեկուզեւ ոչ բոլորի կողմից: Իրերի բերումով Էջմիածնի մի կրոնավոր այդ օրերին այցելեց Թովմա Մեծոփեցուն, որը կիլիկեցիների նամակը վերցնելով՝ տարավ Էջմիածին՝ հրահանգ ստանալով այն տարածել բոլոր հայ հոգեւորականների շրջանում: Այսօր դժվար է անգամ պարզել, թե էջմիածնեցի հիշյալ աբեղան նամակը բազմացնել տվե՞ց, թե՞ անձամբ շրջագայեց երկրով մեկ եւ ծանոթացրեց վանականներին: Թերեւս հավանականը երկրորդն է, քանի որ պատճենը կարող էր լոկ կասկածներ հարուցել, իսկ բնագիրն անպայման կթողներ մեծ ազդեցություն: Կիլիկեցիների նամակը, այսպիսով, մեծ խթան հանդիսացավ կաթողիկոսանիստը Էջմիածին տեղափոխելու խնդրում: Կիլիկեցիների նամակն ուղարկվեց հավանաբար 1440 թվի սկզբներին, քանի որ, Հերմոնեցու իսկ հավաստմամբ, պատասխանն ուղարկվել էր մեկ տարի անց: Հայ հոգեւորականության վասպուրականյան թեւը, մի աբեղայի խոսքերով, գտնում էր, որ բոլորը պետք է գան հնազանդության Աղթամարի կաթողիկոս Զաքարիային եւ նրան էլ տեղափոխել Էջմիածին ու հռչակել Ամենայն Հայոց կաթողիկոս: Եվ ովքեր դեմ էին Աղթամարի կաթողիկոսին Ամենայն Հայոց կաթողիկոս դարձնելու հարցում, սկսեցին բառախաղի դիմել եւ մրցակիցներին մեղադրել աղթարմայության մեջ, որով սովորաբար հայտնի էին կիլիկյան հոգեւորականները:



Գրիգոր Թ Մուսաբեգյանց կաթողիկոսը, որ նույնպես վարակված էր աղթարմայությամբ, 1440 թվին նամակ ուղարկեց Եվգինեոս պապին՝ ոմն Ալբերդոս անունով մի լատին կրոնավորի միջոցով: Դժվար է անգամ այսօր որոշել, թե նամակն անմիջապես Սսի՞ց էր ուղարկված, թե՞ Կաֆայից, սակայն այն պատասխան էր Եվգինեոս Դ պապի նամակին: Եվգինեոսի նամակն ուղարկված էր Կոստանդինին, հետեւաբար հարկ էր, որ Գրիգորն ինչ-որ ձեւով ակնարկեր իր՝ նրա հաջորդը լինելու մասին, եւ ակնարկվեր պապի կոնդակը, ինչի մասին խոսք չկա: Հետեւաբար կոնդակի չհիշելը կա՛մ գիտակցաբար է եւ փաստորեն այն զանց է առնում, կա՛մ էլ պատահական է, այսինքն՝ հավաստում է կոնդակի Սիս չուղարկվելը: Այլ խոսքով՝ կոնդակը Կաֆայից այդպես էլ դուրս չէր եկել: Այս իրողությունների լույսով՝ Ալբերդոսի միջոցով տարված նամակը գործնականում իր նշանակությունը կորցնում է: Փաստորեն Գրիգորի նամակը պարզապես քաղաքավարական քայլ էր, որին շատ մեծ նշանակություն չպետք է տալ: Կոստանդինի գրած նամակն ակնհայտ նրա տեսակետն էր եւ ոչ թե հայ հոգեւորականության հավաքական կարծիքը: Թովմա Մեծոփեցին, որ 12 մեղադրանք է ներկայացնում Սսի կաթողիկոսությանը, այնուամենայնիվ ոչինչ չի հայտնում եւ պարզապես չգիտի Կոստանդինի միության ձգտելու եւ Եվգինեոս պապի կոնդակի մասին: Ճիշտն այն է, որ Արեւելյան եպիսկոպոսները եւ վարդապետները տեղյակ էլ չեն եղել այդ մասին եւ կամ էլ համարել են ոչ կարեւոր: Կաթողիկոսությունը Էջմիածին տեղափոխելու խնդրում նրանք արձանագրում էին, որ մնացել էր աղթարմայությունը Կոստանդին Կեսարացու եւ Գրիգոր Անավարզեցու ժամանակներից եւ ոչ նշում, թե աղթարմայությունը նոր զարկ է ստացել Կոստանդին Վահկացու եւ Գրիգոր Խանձողատի (իմա՛ Մուսաբեգյանցի) կողմից: Այլ խոսքով՝ Արեւելյանները կամենում էին հին աղթարմայությունն արմատախիլ անել:

*Շարունակելի*

***Բաբկեն ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ***
***ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պրոֆեսոր***

Կից սենյակում

# ՆԱԽԱԽՆԱՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՃԱԿԱՏԱԳԻՐ

**Մեր հյուրն է Սբ Երրորդություն եկեղեցու հոգեւոր հովիվ Տ. Եսայի քհն. ԱՐԹԵՆՅԱՆԸ**



**- Քրիստոս Իր հայտնի Լեռան քարոզում հորդորում է հոգ չտանել ուտելիքի, ըմպելիքի, հագուստի մասին, ինչպես երկնքի թռչունները (տե՛ս Մատթ. Զ 26): Սակայն չէ՞ որ մարդը բանական էակ է եւ չի կարող չհոգալ ոչ միայն իր, այլեւ իր երեխաների վաղվա օրվա մասին:**

- Ավետարանի այդ հատվածը, ինչպես բազում այլ դրվագներ, չի կարելի բառացիորեն մեկնել: Ինչ վերաբերում է Տիրոջ՝ վաղվա մասին չհոգալու պատգամին, պիտի առաջարկեմ այն դիտել աստվածային նախախնամության լույսի ներքո՝ կարեւորելով նաեւ այն հանգամանքը, որ Ձեր մեջբերումը Լեռան քարոզի հենց «Ապավինում նախախնամությանը» ենթագլխից է: Այդ նույն հատվածում կա մի միտք, որին մենք հաճախ պատշաճ ուշադրություն չենք դարձնում: Այն է. «... ձեզնից ո՞վ կարող է հոգս անելով՝ իր հասակի վրա մեկ կանգուն ավելացնել» (Մատթ. Զ 27): Փորձենք հասկանալ, թե ում էր ուղղված Տիրոջ այս խոսքը եւ ինչ նպատակով: Քրիստոսի այս խոսքն ուղղված էր առաջին հերթին այն մարդկանց, ովքեր տառապում էին կեղծավորությամբ, ձեւապաշտությամբ, ովքեր ապագայի ծրագրեր էին մշակում առանց Աստծո՝ հույսը դնելով բացառապես իրենց ջանքերի, իրենց ունակությունների վրա: Մարդկանց, ովքեր վաղվա պլաններ էին կազմում ի հեճուկս Աստծո՝ անգամ ուրիշ շատ ու շատ մարդկանց շահերը ոտնահարելու հաշվին: Բոլոր ժամանակներում էլ եղել է, իսկ այսօր՝ առավել ընդգծված, մարդկային մի տեսակ, որը միշտ ուզում է «իր հասակի վրա մեկ կանգուն ավելացնել», ինչը դեմ է աստվածային արարչությանն ու նախախնամությանը:

**- Տե՛ր հայր, աստվածային նախախնամությունը, ինչի մասին դուք խոսում եք, մարդիկ հաճախ շփոթում, անգամ նույնացնում են ճակատագրի հետ, մինչդեռ գիտենք, որ քրիստոնեական վարդապետությունը մերժում է ճակատագիր ասվածը:**

**Ի վերջո, ինչո՞վ են տարբեր հիշյալ հասկացությունները:**

- Դուք ճիշտ եք նկատել, որ մարդիկ հաճախ նույնացնում են այս երկու եզրերը: Ավելի հաճախադեպ է «ճակատագիր» բառի մեջ հենց նախախնամության իմաստը դնելու երեւույթը: Երբեմն էլ նույնիսկ զարմանում են, երբ բացատրում ես, որ ի տարբերություն աստվածային նախախնամության՝ «ճակատագիր» բառեզրը ենթադրում է ազատ կամքի կաշկանդում, անգամ դրա բացակայություն, ինչն ինքնին դատապարտվածության դրոշմն է դնում մարդու ողջ կյանքի վրա: Մինչդեռ աստվածային նախախնամությունը երբեք չի կաշկանդում մեր ազատ կամքը, ընտրության իրավունքն ու մանավանդ՝ հնարավորությունը:

**- Մի տեսակ փակ շրջան չի՞ ստացվում. եթե մինչեւ մեր աշխարհ գալը ամեն բան՝ մեր ողջ կյանքի ընթացքը, նախախնամված, նախասահմանված, կանխորոշված է Բարձրյալի կողմից, այդ դեպքում ինչի՞ համար են ազատ կամքն ու բանականությունը, ըստ այդմ՝ ընտրության հնարավորությունը (ի՞նչ ընտրության մասին է խոսքը), որը պարգեւված է հենց Տիրոջ կողմից:**

- Նախախնամությունն Աստծո «միջամտությունն» է մեր կյանքին, առանց, սակայն, մեր կամքի վրա բռնանալու: Ասել է թե՝ դու կարող ես փոխել քո կյանքը, եւ դա նույնպես նախախնամված է: Այս առումով նախախնամությունն անմիջական կապ ունի Աստծո ամենատեսության հետ: Այսինքն՝ Աստված շատ լավ գիտե, թե մենք ինչպես կապրենք մեր կյանքը, ինչպես այն ավարտին կհասցնենք: Ավելին՝ Նա գիտե՝ կփոխե՞նք, թե՞ չենք փոխի մեր ընթացքը, լա՞վը կընտրենք, թե՞ վատը, կամ՝ կարո՞ղ ենք դա անել, թե՞ ոչ: Սակայն երբեք չի բռնանում. ցույց է տալիս՝ որն է բարին, որը՝ չարը: Բայց ընտրությունը քոնն է, քո ճակատին ոչինչ դրոշմված չէ, դու դատապարտված չես, դու ազատ ես, դու կարող ես փոխել քո կյանքը...

**- Վերը հիշատակված դրվագում Հիսուսը պատվիրում է հոգ չտանել մարմնական որեւէ պետքի համար՝ ասելով. «Քանի որ ձեր երկնավոր Հայրը գիտե, թե այդ բոլորը ձեզ պետք է» (Մատթ. Զ 32): Սա արդյո՞ք նշանակում է, որ կարելի է նաեւ չխնդրել:**

- Ամենեւին: Չխնդրել հոգեւոր առումով նշանակում է չաղոթել: Այլ հարց է, թե ինչ եւ ինչպես ես խնդրում: Ժամագրքում մի հիանալի աղոթք կա, որ ամեն երեկոյան ժամերգության ասում ենք. «Տե՛ր Աստված, Դու ավելի լավ գիտես մեր պետքերը եւ կարիքները, քան մենք»: Հավատացե՛ք՝ շատ հաճախ մենք Աստծուց խնդրում ենք բաներ, որոնք կարող են ոչ թե օգուտ տալ, այլ վնասել մեզ: Այդ մե՛նք չգիտենք, բայց չէ՞ որ Տերը գիտե՝ ինչն է մեզ համար բարի: Դրա համար էլ Եկեղեցու հայրերը մշտապես ուսուցանում են Աստծուց նախ եւ առաջ խնդրել երկնքի արքայությունը: Քրիստոսն Ինքը նույն դրվագում պատվիրում է. «Նախ խնդրեցե՛ք Աստծու արքայությունը եւ Նրա արդարությունը, եւ այդ բոլորը Աստված ձեզ ավելիով կտա» (Մատթ. Զ 33):

**- Ստեփանոս Սյունեցին Ավետարանի իր մեկնության մեջ այսպիսի տողեր ունի. «Հոգս անելով՝ ոչ ոք չի կարող ամուլ մեկին որդեծին դարձնել, թեկուզեւ ծախսի իր ամբողջ ունեցվածքը»: Այդ դեպքում ի՞նչ անել՝ չցանե՞լ, չտնկե՞լ, չսերմանե՞լ... Մի՞թե հոգս անելը բացառում է գործը:**

- Ընդհանրապես հոգսը, հոգս անելը պարապ զբաղմունք է, ավելին՝ մարդկային կյանքի թշնամիներից մեկը, որի վտանգների մասին հաճախ է խոսում մեր Տերն Ավետարանում: Քիչ չեն դեպքերը, երբ մարդը մտածում, հոգս է անում մի բանի մասին՝ այն դարձնելով իր «կյանքի երազանքը»՝ դրան ծառայեցնելով իր ամբողջ ունեցվածքը՝ նյութական թե հոգեւոր: Իրականում, պարզվում է, դա ընդամենը կեղծ արժեք է, անցողիկ ու դատարկ մի բան, հանուն որի մարդը մաշել է իր ողջ կյանքը, իսկ արդյունքում ստացել... ոչինչ: Մենք այսօր դրա վառ օրինակների պակասը չունենք մեր կյանքում: Թողած այսօրվա խնդիրները՝ հաճախ «գլուխ ենք ջարդում», թե վաղն ինչ ենք անելու: Մինչդեռ «վաղվա օրն իր մասին կհոգա»,- ասաց Տերը: Սակայն չշփոթենք՝ Աստված երբեք չպատվիրեց անտեսել անհրաժեշտ եւ չափավոր կարիքները, այլ միայն այն, ինչը մարդ ի վիճակի չէ անել, նաեւ այն, ինչն ավելորդ է, ուրեմն եւ՝ վնասակար: Հայրերն ասում են. «Ամենայն ավելորդ մեղսածին է»:

**- Այդ դեպքում ինչպե՞ս տարբերել՝ որն է ավելորդը կամ այն, ինչը մարդ ի զորու չէ կատարելու: Չէ՞ որ մարդկանց մի տեսակ կա, որոնց թվում է, թե ամեն ինչ կարող են անել, կամ էլ այն, ինչ իրենք են անում, չի կարող ավելորդ լինել:**

- Նման մարդիկ ոչնչով չեն տարբերվում Քրիստոսի ժամանակվա փարիսեցիներից: Ծյուրիմացության, եթե չասեմ՝ խորին մոլորության մեջ է այն մարդը, ով կարծում է, թե կարող է ամեն բան անել, քանի որ ամենակարող զորությունը տիեզերքում Աստված է միայն, Ում առաջ որեւէ մեկը չի կարող հպարտանալ: Նման «իմաստունները», ովքեր կարծում են, թե ամեն ինչ կարող են, վաղ թե ուշ հաստատ պիտի կանգնեն Աստծո առաջ՝ կրելով անլուր ամոթը: Այնպես որ, բոլոր պարագաներում պետք է ապավինել Աստծո օգնականությանը: Մենք, անշուշտ, կարող ենք ազգային, պետական, եկեղեցաշինության առումով ունենալ հեռահար ծրագրեր, բարի իրագործումների նախագծեր, սակայն ամենայն ինչ պետք է անենք՝ Աստծո կամքին ապավինելով: Եվ սա շատ կարեւոր է: Մենք ասում ենք. «Եթե Աստված կամենա, այսինչ բանը կանենք»:

Անշուշտ, միշտ չէ, որ այս բառերն արտասանում ենք, սակայն հոգու խորքում միշտ պետք է այդ մտքին հակված լինենք: Միշտ պետք է հավատանք այն բանին, որ ցանկացած բարի ծրագիր իրագործվում է Աստծո կամքով եւ Աստծո օրհնությամբ:

**- Տերունական աղոթքում ասելով «Եղիցին կամք Քո»՝ մենք ըստ էության Աստծո կամքին ու նախախնամությանն ենք հանձնում մեր կյանքը՝ որպես ամենաապահով հանգրվանի: Սա սոսկ հավա՞տք է, թե՞ նաեւ մեր կողմից քայլեր է ենթադրում:**

*Շարունակությունը՝ էջ 7*

# ՍՏԵՓԱՆՈՍ ՏԱՐՈՆԵՑՈՒ ԱՍՈՂԻԿ

*Սկիզբը՝ էջ 5*

Անակը Խոսրովին սպանելու համար գալիս է Հայաստան, սուրբ Թադեոսի հանգստարանի մոտ տեղի է ունենում Գրիգոր Լուսավորչի մոր հղիությունը: Հայաստան գալու երրորդ տարում Անակն սպանում է Խոսրով արքային: Մանդակունիների տոհմի նախարար Արտավազդն արքայազն Տրդատին փախցնում է Հունաց աշխարհ, իսկ Անակի որդի Գրիգորին փախցնում եւ Գամիրք են տանում պարսիկ Բուրդարը եւ նրա կին ու Գրիգորի ստնտու հավատացյալ Սոփին: Կեսարացիների քաղաքում «սնուցում էին Պահլավիկ մանկանը եւ Քրիստոսի հավատքով ուսուցանում» (I, Ե, 100):

Մինչեւ քրիստոնեության մուտքն ընկած շրջանը, ըստ նրա, «անգիտության խավարի ժամանակներ» են (III, Բ, էջ 206):

Ասողիկը զարմանալիորեն շրջանցում է Հայկի եւ Բելի առասպելը: Նեբրովթ-Բելին նա անդրադառնում է ըստ Աստվածաշնչի, բայց չի պատմում այն մասին, թե ինչպես Բելը ելավ Հայկի դեմ եւ շամփուրահար եղավ: Ասողիկն ընդհանրապես չի խուսափում առասպելներից: Առասպելապատումն ու հրաշապատումը բնորոշ են նրա ոճին, բայց ահա այս հարցում նա, հավանաբար, հավատ չի ընծայել Խորենացուն: Եվ ոչ միայն Հայկի եւ Բելի առասպելն է պակաս, այլ ընդհանուր առասպելաբանության շարքը, որից պահպանվել են սոսկ առանձին դրվագներ եւ անուններ:

Տալով շրջակա ժողովուրդների ծագումնաբանության պատմությունը՝ Ասողիկը շրջանցում է իր ժողովրդին, նրա պատմությունն սկսելով իր պատկերացրած Արշակունիների արքայատոհմով: Առասպելաբանությունից միայն Տորք Անգեղն է, «որը Հայկակի թոռ Պասքամի սերունդից էր <...> եւ այս թեպետեւ առասպել, սակայն այսպիսի զրույցների արժանի է այդ մարդը (I, Ե, էջ 82): Այս տողերը կրկնում ենք՝ վերստին ասելու, որ առասպելը խորթ չէ նրան, բայց առասպելի հերոսների ծագումնաբանական շարքը բացակայում է, որ նշանակում է՝ հավատ չի ընծայել դրանց:

**Երկրորդ հանդեսն** ընդգրկում է վեց գլուխ:

Ըստ Ագաթանգեղոսի շարադրում է Տրդատի եւ Գրիգորի գործունեությունը, Հայաստանում քրիստոնեության ընդունումը: Շատ տպավորիչ է ներկայացնում Տրդատի ուժը, որը «հսկայաբար հարձակվելով՝ ձեռքի արագությամբ երկու մասի է ճեղքում թշնամիների բազմությունը. եւ անհամար մարդիկ նրա հարվածներից գետին էին թավալգլոր լինում, զորօրինակ հմուտ ձկնորսի լիքը ցանցից ձկները գետին թափվեցին ու խայտացին գետնի վրա» (II, Ա, էջ 105): Այդպես, իր վրա նետած պարանը բռնելով, նա ձիու հետ մեկտեղ դեպի իրեն է քաշում ախոյան բասիլների թագավորին եւ երկուսին էլ մեջտեղից հավասար երկու կես անում: Այս պատկերը շատ նման է հորում թաքնված Մսրա Մելիքի վրա իջած Դավթի հարվածին: Ասողիկը եւ դյուցազներգության ստեղծման ժամանակը իրենց նույնական պատկերային մտածողությունն ունեն:



Ըստ Ասողիկի՝ «մեր ազգի ամբարտավան եւ խստասիրտ մարդիկ չարամտությամբ» ընդդիմանում են Քրիստոսի հավատն ընդունած Տրդատին. վերջինս թողնում է երկրային թագավորությունը, գնում Մանյա այրք, դառնում ճգնավոր: Նախարարները նրան ետ են կանչում, որպեսզի նա շարունակի թագավորել, իսկ իրենք ենթարկվեն նրա ցանկությանը, բայց Տրդատը մերժում է, նրան մահվան ըմպելիք են տալիս՝ որպես մոլեխինդ, եւ սպանում: Այստեղ Ասողիկը Տրդատին համարում է սուրբ (II, Ա, էջ 107):

Հայոց Տիրան արքայի կուրացումը Շապուհի զորավարի (մարզպանի) կողմից Ասողիկը բացատրում է որպես հատուցում այն բանի, որ վերջինս ճիպոտի ծեծով սպանեց երանելի Հուսիկին եւ խեղդամահ արեց Դանիել քորեպիսկոպոսին:

Արքաների, հոգեւոր առաջնորդների, նախարարական տների պատմություններով, հիշարժան դեպքերի արձանագրումով հոսում են հայոց պատմության ծանոթ էջերը: Ըստ պատմիչի՝ երանելի Մաշտոցը «Դանիելյան նշանագրերով հայերեն դպրությունը հորինեց»: Այնուհետեւ. «Եվ դրանից հետո <...> վերստին աստվածատուր նշանագրերով նույնը եղանակելով ամբողջացնում է...» (II, Ա, էջ 118): Իսկ մեծ քահանայապետ Սահակը, «Սուրբ Գրքերը հունարեն լեզվից հայերեն լեզվի դարձնելով, Եզնիկի հետ միասին թարգմանում է սուրբ Ղեւոնդիոսի եւ ուրիշների ամենաստույգ օրինակները, որոնք բերվեցին Կոստանդինական քաղաքից» (II, Ա, էջ 119):

Հայոց թագավորության վերացման կապակցությամբ հիշում է Խորենացու ողբը եւ այն համեմատում Երեմիայի ողբի հետ, որը ողբաց հրեից «ազգի կործանումը ու տաճարի անապատանալը»: Ըստ Ասողիկի՝ Արշակունյաց թագավորությունը տեւում է 559 տարի:

Բ գլուխը նվիրված է Արշակունիներին հաջորդած հայոց իշխաններին եւ Սահակ Պարթեւից հետո գահակալած հայոց հայրապետերին: Առանձին դեպքերում խոսքը մանրամասնում է եւ գնահատումները հստակեցնում, ինչպես, օրինակ, Հովհան Մանդակունու պարագայում. «Հայոց հավատի [վերաբերյալ] բազմաթիվ կարգեր սահմանեց, ցերեկվա եւ գիշերվա քարոզները, մկրտության կարգերը, սարկավագինը, քահանայինը, եպիսկոպոսինն ու եկեղեցու օրհնությանը, պատարագամատույցն ամբողջությամբ...» (II, Բ, էջ 125):

*Շարունակելի*

***Դավիթ ԳԱՍՊԱՐՅԱՆ***
***Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր***

# ԹՈՐԿՉԻ ՊԱՏԿԵՐԸ



Սկիզբը՝ թիվ 6

## Թուրինյան պատան

*«...Պետրոսը վեր կացավ եւ վազեց դեպի գերեզման, նայեց ու տեսավ, որ կտավները միայն կային»*,- ասվում է Ղուկասի Ավետարանում: Եկեղեցու հայրերն ասում են, թե հնարավոր է՝ Հիսուսի աշակերտները, գնալով Գալիլիա, թաղման պատանը վերցրել են իրենց հետ եւ պահել՝ որպես սրբություն: Պատանի մասին պատմական որեւէ այլ հիշատակություն չկա: Հայտնի է, որ Թուրինյան պատանը կամ սուրբ վարշամակը 1578 թվականից պահվում է Իտալիայի Թուրին քաղաքի Ս. Հովհաննես տաճարի հատուկ տապանակում, այդ պատճառով էլ այն հայտնի է Թուրինյան պատան անունով: Այն Թուրին են հասցրել Սավոյան դինաստիայի ներկայացուցիչները: Կարծիք կա, որ ավելի վաղ ծածկոցը գտնվել է Կ. Պոլսում, եւ այնտեղից այն դուրս են բերել խաչակրաց արշավանքի մասնակիցները:

1898 թվականին, երբ լուսանկարիչ Սեկոնդա Պիային լուսանկարեց կտավը, թուրինյան մասունքի նկատմամբ հետաքրքրությունն էլ ավելի մեծացավ: Կտավից արված լուսանկարը ցնցեց բոլորին: Պատանն իրենից ներկայացնում էր մարդու մարմնի բնական դրոշմ, որի վրա չկար ներկի ոչ մի հետք: Վուշե կտորի վրա երեւում էին փշե պսակի հետքերը՝ հյուսված ոչ թե օղակի, ինչպես սովորաբար պատկերում են չարչարանքի նկարներում, այլ գլխարկի տեսքով: Արեւելքում արքայական թագը հենց գլխարկի տեսք ուներ: Աջ կողը խոցված էր, երեւում էին մարմնի վրա եղած հարվածների հետքերը: Պատանի վրա արտացոլված պատկերը լիովին համապատասխանում էր չարչարանքի մասին ավետարանական պատմություններին:

Ըստ պատանի պատկերի՝ խաչյալ Հիսուսն ունեցել է ալիքաձեւ մազեր, համեմատաբար նեղ դեմք, նուրբ քիթ, կարճ, երկու կողմի վրա կիսված մուրուք: Դեմքը թեպետ ունի հարվածի եւ կապտուկների հետքեր, այնուամենայնիվ վեհ է ու խաղաղ:

«Դիտեք խորհրդավոր դեմքը եւ ի դեմս նկարի՝ ճանաչեք Աստծո դեմքը»,- հավատացյալներին ուղղված իր խոսքում մի առիթով ասել է Հռոմի Բենեդիկտոս 16-րդը Պապը:

2008 թվականի սեպտեմբերին Իտալիայից Հայաստան ժամանած մի խումբ ուխտավորներ, Թուրինի կարդինալ Սեվերինո Պոլետտոյի նախաձեռնությամբ, Մայր Աթոռ Ս. Էջմիածնին նվիրեցին Հիսուս Քրիստոսի վարշամակի կրկնօրինակը: Պատանքի կրկնօրինակը՝ որպես սուրբ մասունք, ցուցադրվում է Մայր Աթոռի թանգարանում: Հավատացյալները գալիս են խոնարհվելու, հաղորդակցվելու Տիրոջ հետ եւ զորանալու հավատքի մեջ:

Պահպանելով ավանդված կանոնները՝ այնուամենայնիվ յուրաքանչյուր նկարիչ Հիսուսին պատկերում է իր ազգին բնորոշ առանձնահատկություններով: Ճապոնական շեղ աչքերով, սեւամորթ կամ սլավոնական դիմագծերով Քրիստոսի պատկերները վկայում են աշխարհում Փրկչի մշտագո լինելը:

Հովնաթանյանների, Եղիշե Թադեւոսյանի, Վարդգես Սուրենյանցի կտավներում Քրիստոսը հային բնորոշ դիմագծերով է: Քրիստոսին ազգային առանձնահատկություններով պատկերելն աչքառու է հատկապես մանրանկարչային արվեստում: Ավետարաններում ծննդից եւ տյառնընդառաջից հետո Քրիստոսը պատկերվում է հասուն հասակում՝ 30 տարեկանում, երբ սկսում է տնօրինական գործունեությունը: *«Միջնադարում Քրիստոսը, ընկալվելով որպես Եկեղեցու գլուխ, որպես գերագույն Քահանայապետ, որոշակի միտումով պատկերվում է համապատասխան ծիսական ձեւերով, քահանյապետական հանդերձանքով, եւ քանի որ վանականությունը մորուսով էր, Քրիստոսը պատկերվում է մորուսով*,- ասում է Վարդան Դեւրիկյանը:- *Հիմնականում 30 տարեկանից հետո նա պատկերվում է շեշտված մորուսով, երկայն մազերով, հոգեւորականին պատշաճ տեսքով»*:

Մանրանկարչության մեջ՝ մկրտության տեսարանում, որպես բացառություն, Քրիստոսը պատկերվում է անմորուս ու ավելի փոքր, քան Իրեն շրջապատողները: Թեեւ Հովհաննես Մկրտիչը եւ Հիսուսը տարեկիցներ են, Հորդանանում մկրտության ժամանակ Հովհաննես Մկրտիչը շեշտված ձեւով մեծ է պատկերվում, եւ Քրիստոսը նրա համեմատ, ասես, մանուկ լինի: *«Սա պայմանավորված է վաղ քրիստոնեությունից եկող այն ըմբռնմամբ, որ մինչեւ մկրտվելը նորադարձ քրիստոնյաները մանուկ էին, որ մկրտվում էին: Մկրտությունը մանկության սկիզբն էր: Այս խորհրդանիշով էլ, քանի որ Քրիստոսն Ինքն էր մկրտվում Հովհաննեսից, Նա որպես մանուկ է պատկերվում, իսկ Հովհաննեսը՝ արդեն հասուն մկրտող»*,- պարզաբանում է Վարդան Դեւրիկյանը: Հայ միջնադարյան մանրանկարչության արվեստը շարունակվում է նաեւ մեր օրերում: Մանրանկարիչները, ավանդված կանոնների շրջանակներում, չփոխելով ու չանտեսելով ոչինչ, ստեղծում են Փրկչի նոր պատկերներ: Մանրանկարիչները խոստովանում են, որ սրբապատկերային արվեստում ամենադժվար ու պատասխանատու գործը Փրկչին պատկերելն է:

## Հիսուսը ֆիլմերում

Կինոյի առաջին հրապարակային ցուցադրումից ընդամենը 1,5 տարի հետո՝ 1897 թվականին, էկրան բարձրացավ ֆրանսիացի ռեժիսոր Լեռայի «Աշխատանքներ» ֆիլմը, ուր առաջին անգամ հանդիսատեսին ներկայացվեցին Քրիստոսի չարչարանքները: Հիսուսի էկրանավորումը առաջադրեց մի խնդիր, որի լուծման բանալին մինչ օրս ռեժիսորները փնտրում են, թեպետ Աստծո Որդուն նվիրված 150-ից ավելի ֆիլմ կա նկարահանված: Ի՞նչ նկարագիր պետք է ունենա Տիրոջ Որդին. ավետարանական պատմություններ էկրանավորող ռեժիսորների առջեւ այս հարցն էր ծառացել: 20-ական թվականներին, երբ Ֆրեյդ Նիբլոյը նկարահանեց «Բեն Հուրը» ֆիլմը, Հիսուսը ներկայացված էր, այսպես կոչված, «քողարկման» սկզբունքով:

*«Դա հենված է այն գաղափարի ըմբռնման վրա, որ գերբնականն անհասանելի է, անըմբռնելի, որ եթե մատչելի է դառնում անմիջական հայեցողությանը, ուրեմն զրկվում է սրբազան բնույթից, ուստի այդ ֆիլմերում*,- ասում է կինոգետ Զավեն Բոյաջյանը,- *Քրիստոսի դեմքն ընդհանապես չի երեւում: Տիրոջ դեմքը ներկայացված է թիկունքից, կամ ցուցադրվում են Նրա ձեռքերը միայն»*:

1959 թվականին Վիլյամ Վալմերը «Բեն Հուրը» նույն սկզբունքով վերաէկրանավորեց: Ֆիլմը լայն ընդունելություն գտավ եւ արժանացավ 11 «Օսկար»-ի:

1927 թվականին, երբ հանդիսատեսին «քողարկման» սկզբունքով ներկայացվում էր Աստծո Որդին, ամերիկացի հայտնի ռեժիսոր Սեսիլ Դե Նիլը նկարահանեց «Արքայից արքա» ֆիլմը, ուր առաջին անգամ ամբողջ էկրանով մեկ երեւաց Հիսուսի դեմքը: Քողարկման սկզբունքը տեղի տվեց: Ռեժիսորները նկարահանեցին ֆիլմեր, ուր Հիսուսն այնպիսի տեսք ուներ, ինչպիսին Վերածննդի ժամանակաշրջանի նկարներում էր՝ բարետես, վայելուչ, համակրելի, դեմքին՝ բարություն ու քնքշանք: Կինոգետ Զավեն Բոյաջյանի կարծիքով՝ կինոն ժառանգել է Հիսուսի պատկերման կերպարվեստի ավանդույթը: Ըստ նրա՝ Ֆրանկո Զեֆիրելլիի «Հիսուս Նազովրեցի» ֆիլմը կանոնիկ մեկնաբանության վառ օրինակ է, ուր Հիսուսի դերակատար Ռոբերտ Պաուելը բոլոր չափանիշներով համապատասխանում է Տիրոջ Որդու մասին ավանդական պատկերացումներին: 1964 թվականին Պազոլինիի նկարահանած «Ավետարան՝ ըստ Մատթեոսի» ֆիլմը գնահատվեց Սուրբ Գրքի լավագույն էկրանավորում, եւ Հռոմի Պապը խնդրեց Հիսուսի դերակատար Էնրիկե Ասոկիին այլ ֆիլմերում չնկարահանվել:

Ըստ Զավեն Բոյաջյանի՝ *«Պազոլինիի ֆիլմում ներկայացված է շատ բարետես Հիսուս, ով իր արտաքին տեսքով շատ բանով չի տարբերվում այն մարդկանցից, ում քարոզում է իր ուսմունքը: Դա այնպիսի մաքուր, զտված, կատարսիսի հասած դեմք է, որ ես կարող եմ այդ դեմքին նայել, եւ իմ մեջ անընդհատ դրական հույզեր են արթնանում: Շիկահեր, կապուտաչյա, շատ կանոնիկ դեմք չէ, բայց միեւնույն ժամանակ համակրելի երիտասարդի դեմք է, որ համապատասխանում է ֆիլմի ոգուն: Շատ կարեւոր է այդ ֆիզիկական նկարագիրը»*:

Հիսուս Քրիստոսի՝ Աստծո Որդու կյանքն ու գործունեությունը հավերժական մի պատմություն է, որն ամեն սերունդ փորձում է յուրովի մեկնաբանել ու վերծանել: Կինոն, բերելով ընկալման նոր երանգներ, օգնում է քրիստոնեական պատմության ինքնատիպ ընկալմանն ու վերաիմաստավորմանը:

Փոփոխական այս աշխարհում անփոփոխ է միայն Հիսուս Քրիստոսի հոգեւոր



դեմքը: Արդյո՞ք հավատքի զորացման համար կարեւոր պայման է Աստծո Որդու ֆիզիկական դեմքը: Ըստ Վարդան արք. Նավասարդյանի՝ *«Ոչ թե փառավորենք Աստծուն՝ ասելով այս նկարի առջեւ կանգնեցի, այլ պատկերի ավելի խորհրդաբանական իմաստին ուշադրություն դարձնենք հավատքի ճանապարհով: Աղոթենք՝ նպատակ ունենալով հոգեւոր առումով միավորվել Աստծո հետ, միավորվել Քրիստոսի հետ, ոչ թե միայն տեսնել այդ պատկերը, ճանաչել, այլ մեր ճանաչողությունը լինի հոգեւոր աչքերով: Դա մեր կյանքի նպատակակետը դառնա, որ մենք ձգտենք Աստծուն»*:

«Երանի նրանց, ովքեր չեն տեսնի, բայց կհավատան»: Ավետարանական այս ճշմարտությունը մատնանշում է, որ կարեւորը Փրկչին հոգով ճանաչելն ու հավատալն է, ոչ թե ֆիզիկական դեմքի տարաբնույթ պատկերումը:

*Ալվարդ ՆԱԶԱՐՅԱՆ*

Սկիզբը՝ էջ 6

# ՆԱԽԱԽՆԱՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՃԱԿԱՏԱԳԻՐ

- Աղոթք ասելով՝ միշտ պետք է հասկանանք միայն կենդանի աղոթքը: Իսկ կենդանի աղոթքը միայն խոսք չէ: Աղոթքը լոկ այն բառերը չեն, որ մենք եկեղեցում, տանը կամ դրսում արտաբերում ենք՝ խոսելով Աստծո հետ: Աղոթքը մեր ապրած կյանքն է, մեր բարի գործերն են, մեր բարի ցանկություններն են, մեր բարի սիրտն է: Աղոթքն ինքնին գործ է:

Վերադառնալով մեր զրույցի հիմնական նյութին՝ նկատենք, որ «ճակատագիր» եւ «նախախնամություն» բառերի ստուգաբանությունն իսկ ամեն ինչ ասում է դրանց բովանդակության մասին. ճակատին գրվածը, դրոշմվածը անհնար է փոխել, իսկ նախախնամությունը նախապես խնամելու, հոգ տանելու գաղափարն է պարունակում իր մեջ, ինչն Աստվածմարդ, Հայր-որդի հարաբերության առանցքն է: Ընտանիքի հայրը ինչպե՞ս է խնամում իր որդուն: Ճիշտ այնպես, ինչպես Աստված՝ Իր արարչության պսակին՝ մարդուն՝ սիրով, գուրգուրանքով, համբերությամբ, հավատքով եւ ոչ երբեք՝



բռնությամբ: Ամեն անգամ ներքին խռովք եմ ունենում՝ լսելով, թե ինչպես են նույնացնում այս երկու հասկացությունները, ինչն իր խորքում սոսկ բառային շփոթ չէ, ցավոք: Մեր հայրերն Ավարայրում՝ հայրենյաց եւ հավատքի պատերազմում, իրենց կյանքը դրեցին՝ կռվելով նաեւ ճակատագրապաշտության դեմ, ինչը մեզ փորձում էր պարտադրել պարսից զրադաշտական կրոնը: Եվ, ապա, այսօր մեզանից շատերը կամովին ընդունում են այն մոլորությունը, ինչը մեր հայրերը մերժեցին մեկուկես հազարամյակ առաջ:

**- Աստվածային նախախնամությա՞մբ են ոմանք առողջ, մյուսները՝ հիվանդ կամ հաշմանդամ:**

- Եթե հիվանդությունը կամ հաշմանդամությունը դիտում ենք իբրեւ Աստծուց մեզ ուղարկված պատիժ, ապա այն ոչ մի կապ չունի նախախնամության հետ: Բայց Քրիստոսը երբեք չասաց, թե հաշմանդամությունը պատիժ է՝ Աստծուց տրված: Հաշմանդամությունը կարող է լինել փորձություն, առիթ, որով պիտի կարողանանք առվել ծառայել Աստծո փառքի համար: Այս տեսանկյունից դիտարկելով, այո՛, անպայման ներկա է աստվածային նախախնամությունը: Ընդհանրապես, աստվածային նախախնամությունը՝ իբրեւ իրողություն, առավել ամբողջական ու արժեւորված է դառնում, երբ մենք Աստծուն ընդունում ենք ոչ միայն որպես մեր Արարչի, այլեւ որպես մեր երկնավոր Հոր, Ով խնամում ու պահպանում է մեզ: Եվ սա, անշուշտ, վերաբերում է ոչ միայն այս կյանքին, այլեւ հավիտենականին:

**- Ըստ Ձեզ՝ մեր ժողովուրդը նախախնամվա՞ծ է արդյոք Տիրոջ կողմից որեւէ առաքելության համար: Եթե՝ այո՛, ո՞րն է այդ առաքելությունը:**

- Մեր առաքելության մասին մենք երգում ենք մեր հոգեւոր շարականներում ամեն օր՝ ամեն ժամերգությանը: Լինել Նոր Իսրայել, Աստծո ընտրյալ ժողովուրդ՝ արժանապես: Հավատալ Քրիստոսին ոչ թե խոսքերով, այլ հոգով, սրտով, ամբողջ էությամբ, վստահել Տիրոջը, Նրա խոսքերին, Նրա Ավետարանին, քայլել Նրա չարչարանքերով, մահվամբ ու հարությամբ սրբագործված փրկության ճանապարհով, լինել Նոր Ուխտի զավակները. սա՛ է մեր ազգի գլխավոր առաքելությունն աստվածային նախախնամության լույսի ներքո:

*Հյուրընկալեց*
*Հայկ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԸ*

Մետրոպոլիտ Անտոնի ՍՈՒՐՈԺՍԿԻ

# ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՄԱՍԻՆ



*Սկիզբը՝ թիվ 5-6*

Յուրաքանչյուր հոգեւորական պետք է հիշի, որ սուրբ սեղանի առջեւ է կանգնում հանուն իր ժողովրդի, քանի որ ինքը փրկություն պահանջող այդ ժողովրդի մի մասնիկն է, եւ նա կանգնում է՝ արտաբերելու այն խոսքերը, որ միայն Քրիստոսն իրավունք ունի ասելու, միայն Նա է ի զորու դրանք հնչեցնելու հացի, գինու, մկրտության ջրի, օծման յուղի վրա: Այսպիսով՝ խորհուրդներն Աստծո գործողություններն են, որոնք մեզ հաղորդ են դարձնում աստվածային, ինչպես եւ մեր ճշմարիտ մարդկային գաղտնիքներին: Մկրտության խորհրդում մենք, հետզհետե աճելով, դառնում ենք այն մարդը, ով իրեն Աստծուց հեռացնող մեղքերից մաքրելով, կոչված է դառնալու արդար մեկը, ինչպես նախաստեղծ, դեռեւս չընկած Ադամն ու Եվան էին: Ավելին՝ աճելով մենք կհասնենք Քրիստոսի հետ հաղորդվելուն, Ով մեզ պիտի միավորի Իր մարդկայնությանը, այսինքն՝ կատարյալ մարդկայնությանը եւ հաղորդ դարձնի Իր Աստվածությանը: Հարկ է՝ առանձին եւ առանձնակի կանգ առնել Մկրտության խորհրդի վրա: Մկրտության խորհուրդին կարող ենք հասու դառնալ՝ Ավետարանում նկարագրված իրադարձություններին հետեւելով: Մկրտության խորհրդում առկա է երեք պահ: Առաջինը Հովհաննեսի մկրտությունն է: Հովհաննես Մկրտիչն իր մոտ էր կանչում ժողովրդին ու ասում. «Ապաշխարեցեք», այսինքն՝ հեռացեք բոլոր տեսակի մեղքերից, ձեր բոլոր անմաքրություններից, բոլոր տեսակի կեղծիքներից, չարին՝ ձեր հակվածության բոլոր տեսակներից, եւ որպեսզի ցույց տային իրենց պատրաստակամությունը, պետք է ջուրը մտնեին՝ իրենց վրայից ասես մաքրելու անմաքրությունները:

Մի հրաշալի քահանա ինձ ասաց, թե ինքն ինչպես է ընկալում մկրտությունը: Նա ասում էր, որ երբ Քրիստոսն ընկղմվում է այդ ջրերում, ընկղմվում է մարդկության մեղքերից ծանրացած ջրերում՝ ծանրացած մահացություններից, ինչն իր ետեւից բերում է մեղքը: Եվ Նա, սուզվելով այդ ջրերում, ընկղմվում է մահացության մեջ, եւ Իր վրա ոչ մի մեղք չունենալով՝ կրում է մեր բոլոր մեղքերի հետեւանքները: Այդ հոգեւորականը մի օրինակ բերեց, որն այդ ժամանակ ինձ խիստ զարմանք պատճառեց: Այդ ջուր մտնելը,- ասում էր նա,- նման էր մաքուր կտավը գույների մեջ թաթախելուն. կտավը, իհարկե, ըստ էության չի փոխվում, սակայն մենք այն արդեն դուրս ենք բերում ներկված: Ահա թե ինչ է տեղի ունենում Քրիստոսի մկրտությամբ: Այն անխուսափելիորեն կապված է Հովհաննեսի մկրտության հետ, մարդկանց ապաշխարումի հետ, որով էլ այդ ջրերն ասես լցվում են մարդկային մահացածությամբ: Քրիստոսն ասես իր վրա է վերցնում այդ ջրերը՝ որպես ողջ մարդկության մահը, որը Նա մինչեւ խաչ տարավ Իր հետ:

Եվ երբ մենք սուզվում ենք մկրտության ջրում, ընկղմվում ենք ասես Քրիստոսի՝ մահացությունից, ամբողջ մարդկային կեղտից մաքրած ջուրը: Այդ ջրերը շփվել են Մաքրության, Քրիստոսի բուն սրբության հետ, եւ այժմ լցված են աստվածության կրակներով, որոնցով Քրիստոսն այրեց մահացությունը՝ Իր վրա վերցնելով այն: Երբ մենք գալիս ենք մկրտվելու, պետք է հիշենք, որ մտնում ենք մի ջրի մեջ, որը մահվան ու հարության խորհրդանշանն է: Դա շատ հեշտ է պատկերացնել: Հնարավոր է՝ երեխային դա շատ ավելի հեշտ է հասկանալ, քան որեւէ գիտնականի, ով ուզում է անպայման տեսնել խորհրդանիշները: Եթե մարդուն գլխով սուզես ջրի մեջ, դա նրա մահը կլինի: Իսկ երբ մեզ սուզում են մկրտության ջրում, մենք դա պետք է զգանք որպես մի պահ, երբ մահն է այցելում մեզ, եթե հանկարծ Աստծո ձայնից չկանչվենք այդ մահվան տարերքից: Երկրորդ. մենք մտնում ու դուրս ենք գալիս այդ ջրից, եւ դա մեր հարության խորհրդանիշն է: Մենք դուրս ենք գալիս այդ ջրից եւ շնչում նորովի: Մաքրվում ենք մեր սկզբնական մեղքից, որը հեռացրել էր մեզ Աստծուց, օտարացրել Նրան, եւ դուրս գալիս նոր կյանքի ոլորտ: Մենք այժմ դառնում ենք Քրիստոսինը, մենք ասես մեզ վրա կրում ենք մաքրությունը, Քրիստոսի սրբությունը՝ մեզ տրված Նրա հավիտենական կյանքի հետ միասին: Աստված իմ, իսկ ի՞նչ է դա նշանակում: Դա նշանակում է, ինչպես Պողոս առաքյալն է ասում, որ նախկինում՝ մինչ մկրտությունը, մենք պղծում էինք միայն ինքներս մեզ, իսկ եթե մկրտությունից հետո պղծենք մեր մարմինն ու հոգին, ապա սրբապղծած կլինենք արդեն Հիսուս Քրիստոսին: Առաքյալը խիստ ողբերգական է սա արտահայտում, երբ դիմում է հավատացյալներին ու ասում, թե՝ մի՞թե պիտի վերցնեք Քրիստոսի անդամները, այսինքն՝ մեր անդամները՝ ձեռքերը, ոտքերը, ողջ մարմինը, եւ պոռնիկի անդամներ դարձնեք (Ա Կորնթ. Զ 15): Եվ ամենեւին չպետք է հասկանալ միայն զուտ պոռնկական մեղքը, այլ այն բոլոր մեղքերը, որ համարվում է Աստծո հանդեպ «պոռնկական». դրանք մեր գործողություններն են, մտքերը, զգացմունքները, ցանկությունները, արարքները, որոնք ոչ մի կերպ չեն համապատասխանում Քրիստոսի հետ մեր միավորումին:

Մկրտության այս ողբերգական նշանակության մեջ, ամենամեծ արժեւորումն այն է, որ մենք դառնում ենք Քրիստոսի Մարմինը, եւ այն ամենը, ինչ մենք անում ենք մեր մարմնի, մեր հոգու, մեր կյանքի հետ, անում ենք որպես աստվածասպաններ եւ կամ՝ մարդիկ, որոնք արդեն երկրորդ անգամ են երես դարձնում Քրիստոսից՝ Նրա հետ արդեն մեկ դառնալուց հետո: Սա շատ մեծ պատասխանատվություն է...

Սակայն, երբ արդեն սուզվում ենք այդ ջրում եւ ընդունում Քրիստոսի հետ մեր միավորումը, կարող ենք մկրտությունից գնալ դեպի Սուրբ Հոգու շնորհները, ինչն իհարկե մեզ տրվում է անմիջապես, ինչպես տրվեց Քրիստոսին, երբ Նա դուրս եկավ Հորդանանի ջրերից: Եվ այդ շնորհներով արդեն կարող ենք մոտենալ արքայական դարպասներին, որի միջով մենք դեռեւս անցնել չենք կարող, սակայն այդտեղից մեզ ընդառաջ է գալիս Ինքը՝ Քրիստոսը՝ մեզ հաղորդ դարձնելու Իր Մարմնին ու Արյանը:

Ահա թե ինչն է խորհուրդների բուն էությունը:

***Թարգմանությունը՝ Ռուզաննա ԱՐՈՅԱՆԻ***



# ՎՐԱՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԱՅԱԶԳԻ ՍՐԲՈՒՀԻՆԵՐ

Հունվարի 14-ին Վրաց եկեղեցին նշում է իրենց մեծագույն սրբերից մեկի՝ Նունեի (+ 337), իսկ 15-ին՝ ծագումով հայազգի սրբուհիներ Սալոմե Արշակունի Ուջարմացու եւ Պերոժավրա Սյունեցու տոները: Հայկական աղբյուրները բացառապես ոչ մի տեղեկություն չեն հաղորդում այս սրբուհիների մասին, իսկ ահա Վրաց եկեղեցու «Վարք սրբոց»-ում (З. Мачитадзе, "Жития грузинских святых", Тбилиси, 2007 г.) կան տեղեկություններ, որոնք կարող են հայերիս համար հետաքրքիր լինել: Այստեղ կարդում ենք, որ Սալոմեն եւ Պերոժավրան եղել են Վրաց եկեղեցու նշանավոր սրբուհի Նունեի (Նինո) մերձավոր զինակիցները, եւ որ Սալոմեն հայոց Տրդատ Մեծ թագավորի դուստրն էր եւ վրաց Միրիան (վրաց աղբյուրների հավաստմամբ՝ Միրիանը Սասանյան Շապուհ արքայի որդին էր, ով Իբերիայի գահն էր բարձրացել վրացիների խնդրանքով եւ հետագայում ընդունել քրիստոնեություն՝ մեծապես աջակցելով սրբուհի Նունեին) թագավորի որդի Ռեւիի կինը. «Երբ Կոստանդին Մեծը պարսիկների դեմ հաղթանակ տարավ, քաղաքական նկատառումներով, հանուն խաղաղության, նպաստեց նրան, որ Տրդատն իր դստերը՝ Սալոմեին, կնության տա Միրիանի որդուն, որին Ռեւ էին կոչում: Միրիան թագավորը Ռեւին եւ Սալոմեին հանձնեց Կախեթիան ու Կուխեթիան եւ գահանիստը դարձրեց Ուջարման... Այդ ժամանակ մեզ մոտ եկավ սուրբ ու երանելի Նունեն, որի քարոզչության արդյունքում ե՛ւ Միրիան թագավորը, ե՛ւ ողջ վրաց ժողովուրդն ընդունեցին քրիստոնեություն»: Իսկ ծագումով սյունեցի Պերոժավրան Քարթլիի մեծատոհմիկ ազատիճանավորներից մեկի (էրիսթավի) կինն էր: Այս երկու բարձրաշխարհիկ հայ կանայք



հնազանդորեն ծառայել են կարոտյալ «գերուհուն» (Նունեն այսպես է ինքն իրեն անվանել), ջերմեռանդորեն նրանից սովորել աղոթքներ, պահեցողության եւ այլ առաքինություններ, օգնել նրան՝ վրաց ժողովրդին դարձի բերելու գործում:

Քարթլիում, քրիստոնեությունն ընդունելուց հետո, Նունեի ներշնչմամբ եւ Միրիանի հրամանով, Սալոմեն է Ուջարմում բարձրացրել սուրբ Խաչը:

Կյանքի վերջում, երբ Նունեն հիվանդացել է, նրա սնարի մոտ են հավաքվել նրան պատվողները, որոնց թվում էին Սալոմեն եւ Պերոժավրան: Նրանք մահվան մահճում պառկած Նինոյին խնդրում են, որ պատմի իր մասին, պատմի, թե ով է, երբ եւ որտեղ է ծնվել, ովքեր են եղել ծնողները, ում կողմից է ուղարկվել եւ ինչպես է հայտնվել Վրաստանում: Եվ ահա այս բարեպաշտ ու քրիստոսասեր կանայք էլ հետագայում գրում են Նունեի մասին:

Գլխավոր աղբյուրը, որտեղ առաջին անգամ խոսվում է այս երկու հայուհիների մասին, «Քարթլիի դարձը» գործն է (8-9 դդ.): Իսկ վրաց եկեղեցական պատմաբան Միխայիլ Սաբինինը (Սաբինաշվիլի) 1873 թ. Ս.Պետերբուրգում լույս տեսած «Иверский Патерик» («Իբերիայի սրբերի վարքը») գրքում, ուր խոսվում է Սալոմեի մասին, կրկին հիշատակում է նրա՝ Տրդատի դուստրը լինելու մասին. «...Այն ժամանակ Միրիան թագավորը կառուցեց Սամտավրյան (եպիսկոպոսական) տաճարը, եւ մեծ շուքով կատարեցին օծումը: Միրիանի դարձից 35 տարի անց մահացավ նրա որդի Ռեւին՝ Հայաստանի թագավոր Տրդատի փեսան» (էջ 95):

Ի դեպ, նոյեմբերի 29-ին Օրթոդոքս եկեղեցին հիշատակում է նաեւ Հայոց սուրբ Տրդատ արքային:

***Ռ. ՂԱԶԱՐՅԱՆ***
***Թարգմ. ռուսերենից՝***
***Ա. Ս.***

**ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ**

Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ

**Հիմնադիր՝**
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

**Հրատարակիչ՝**
«Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն

**Գլխավոր խմբագիր՝**
Աստղիկ Ստամբոլցյան

**Գրանցման վկայական՝ 624**

**Խմբագրության հասցեն՝**
Մայր Աթոռ Սբ Էջմիածին

**Հեռախոս՝ 517197**
**Էլ.փոստ՝ qh@etchmiadzin.am**
Ստոր. տպագր. 16. 4. 2009 թ.

**Տպաքանակը՝ 2100**
**Գինը՝ 50 դրամ**